ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ
ԿՅԱՆՔԸ

ՀՐ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

54

ՊՈՌՇՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

ՊԵՏՀՐԱՏ

ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԸ

ՉՈՐՐՈՐԴ ԳԻՐՔ

ՊԵՐՃ ՊՌՈՆՅԱՆ

1837 — 1907

ՅԵՐԵՎԱՆ · 1937

Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

891.99-092[Պուճյուռ]

ՍՏԱՑՎԱԾ է 1961 թ.

ՊՈՒՃՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Հ 3477 Ա 65×25

ՊԵՏՀՐԱՏ
ՀԱՅԵՄԿԿԿԻՑ ՄԱՆԿՊԱՏ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ՀԱՅԿ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿ. ՀԱՏՈՒԿ ՖՈՆԴ

Գատ. խմբագիր՝ Ռ. Զարյան
Հեղինակի պորտրետն, անվանաթերթերը և տեխ. խմբ. Ան.
Գասպարյանի
Սրբագրիչ՝ Ս. Շահբազյան

1980



Պերճ Պռոշյան

Ցեվ թող ապրի անմահ վառքով,
Ով վոր ցավը թույլ թշվառի
Կարեկցության հզոր խոսքով,
Դարձնում է ցավն իր ուշխարհի։

Հովհ. Թումանյան

Պերճ Ստեփանի Պռոշյանը ծնվել է Աշտարակում, 1837 թվին հունիսի 3-ին։ Նրա իսկական անունը Հովհաննես է, ազգանունը՝ Տեր-Առաքելյան։ Իրեն համարելով սերած Գյառնու նահանգի Պռոշ իշխանի տոհմից՝ վերանվանվել է Պռոշյանց։ Պերճ անունը կապված է առաջին բանաստեղծության տպագրության հետ[1]։ Վիպասանի հայրը՝ դերձակ Ստեփանը՝ գյուղի վերջին չքավորներից եր. նա ասեղով ու պտղությամբ եր հայթայթում իր ընտանիքի ապրուստը։ «Հայրս դերձակ է յեղել և մայրս նրա ոգնականուհին։ Իմ ամենախոր հիշողությունը հասնում է մինչև հորս մկրատը, կիսագաղը և ընկույզի դազգյահը» պատմում է վիպասանը «Հուշիկներ»-ի մեջ։ Դերձակ Ստեփանի միակ սեփականությունը փոքրիկ այգին եր, և մեկ ել անլույս ու խոնավ խրճիթը։ Պռոշյանների հին տունը,

1) «Մեղու Հայաստանի» լրագրի 1859 թվի № 16-ում տպագրված Պռոշյանի անդրանիկ բանաստեղծությունը՝ «Առ անձկալին Շուշան դուստր Վարդանա» ստորագրված է՝ Հովհաննես (նույն Պերճ) Պռոշ Աշտարակեցի։ Հաջորդ տարին (1860 թ.) «Կռունկ»-ում տպագրված «Սոս և Վարդիթեր» վեպը ստորագրված է Պերճ Պռոշյան։

ուր ծնվել և մանկության տարիներն ե անցկացրել Հով-
հաննեսը, այսոր էլ դեռ պահպանում ե իր կիսախարխուլ
գոյությունը՝ հին Աշտարակի մի հետ ընկած թաղում։

Ստեփանը յեղել ե սիրող և հոգատար հայր։ Նա
միաժամանակ ուսուցնասեր մարդ եր։ Զկարողանալով
կրթության տալ ավագ վորդուն՝ Խուրոմին, խիստ
մտահոգված եր կրտսեր վորդու վիճակով։

Յոթնամյա Հովհաննեսի համար նա ձեռք ե բե-
րում Զմյուռնիայում հրատարակված, պատկերազարդ
և մանկավարժական նոր մեթոդներով կազմած այբ-
բենարան։ Յեղբոր ոգնությամբ Հովհաննեսը յերկու
շաբաթում սովորում ե կարդալ—գրել։ Այդ ժամանակ
Աշտարակում դեռևս դպրոց չկար. և ահա Ստեփանը
միտք ե հղանում գյուղում դպրոց հիմնել։ «Մինչև մի
կանոնավոր ուսուցնարան բաց չանեմ, չեմ հանգստա-
նալ—միշտ կրկնում եր նա—բերանիս թիքին կկտրեմ
ու ես պատիկին գոնե մարդ կշինեմ»։ «Պատիկը» Հով-
հաննեսն եր, դերձակ Ստեփանի կրտսեր վորդին։ 1845
թվին Ստեփանը աշտարակցիների հանձնարարությամբ
Վաղարշապատից հրավիրում ե «հրարունի», «փիլի-
սոփա» Շապուհ Շահնազարյանցին։ Վարժապետ Շա-
պուհի 70 աշակերտներից մեկն ե դառնում Հովհան-
նեսը, ամենավոքրը և ամենաառաջադեմը դպրոցում։
Մահակի և ռոզգու դպրոց ե անվանում Պռոշյանը այդ
դպրոցը, ուր յերեխաներն ավելի ծեծ ու հայհոյանք
եյին ստանում, քան գիտություն։ Պռոշյանին ևս ա-
ռատ բաժին ե ընկել Շապուհի բարբարոսություննե-
բից։ Նրա արտակարգ ընդունակությունները և առա-
ջադիմությունը չեն փրկել նրան ծեծից և ոլատից։
«Տասնավոր ճղնիկներ ամեն ատծու տված որ փշը-

վում էին ազգրներիս փափուկ մսերի վրա։ Զարությունս վոչ այլ ինչ էր, յեթե վոչ մանկական անմեղ և աշխուժ խաղեր» («Հուշիկներ»)։ Մի այլ տեղ Պռոշյանը գրում է դառնությամբ. «Ոռզգի էին տալիս ամեն որ մոլրոմները ռամիկին, ռոզգի էին տալիս Եշմիածնի դպրոցից դուրս արած կամ դուրս յեկած ու գյուղերը ցրված խալֆեքը իրենց աշակերտներին»։

Պռոշյանների տունն Աշտարակում

Այս շրջանում է, վոր Պռոշյանը միակ անգամ իր կյանքում տեսնում է Աշտարակ յեկած Յերևանի արքունի գավառական դպրոցի վերատեսուչ Խաչատուր Աբովյանին։ Ինքնամյա Հովհաննեսը Աբովյանին զարմացնում է իր սուր հիշողությամբ, համարձակ, սրա-

միտ և խելացի պատասխաններով և արժանանում է նրա փաղաքշանքներին։

«Հուշիկներ»-ում Պռոշյանն այսպես է նկարագրում Աբովյանի հետ ունեցած իր հանդիպումը.

«Աղան բարևեց, հետո նստեց խալիֆա Շապուհի միակ հասարակ փայտյա աթոռի վրա և մատով ինձ յուր մոտ կանչեց ու հարցրեց.

—Ընչի՞ համար դու փոքրիկ ես ու քո հասակակիցներին թողած՝ մեծ տղայոց մոտ, բոլորի ծայրումն ես նստել, յերևի մեծերը քո դասըդ սերտացնում են հա։

—Մեղք կլինի՞, վոր ասես՝ յես եմ նրանց չգիտցածը գլխի ձգում, առաջին աշակերտն եմ, հանդգնաբար պատասխանեցի յես։

—Վոնց թե դու յես առաջին աշակերտը, զարմացմամբ ու քնքշաբար առաջ քաշեց, յերկու ծնկների մեջ առավ ինձ ու հարցրեց աղան. դու դեռ մի թիզ չկաս, ահագին ահագին մազ ու միրուքով տղամարդկանց առաջինն ես։

—Կուզես՝ խալֆիս հարցրու։

—Հրաման քեզ, վողորմած տեր, դա մեր առաջին աշակերտն է, հաստատեց Շարո խալֆան։

—Հը՞ լավ, ապրիս, գլուխս շոյեց աղան և հարցրեց.

—Յեթե դու առաջին աշակերտն ես, ասա տեսնեմ՝ հաց ու պանիր կարդացել ես։

—Հաց ու պանիր ամեն որ ուտում եմ, դու մեծ մեծ բաներ ասա։

—Վոր եղպես է, գնա գիրքդ բեր տեսնեմ։

—Մի՞թե դու քերականություն ես սովորում,

ստուգիվ աչքերը չռեց աղան և հարցասիրաբար նայեց ուսուցչին։

—Այո՛, աղա, դրա փոքրությանը մի նայեք, Զամչյան քերականության առաջին մասը վերջացրել է և ամենքից լավ սովորում է, պնդեց վարժապետը։

Աբովյանը ընդամենը յերեք որ է մնում Աշտարակում, բայց չլսված և չտեսնված բարեփոխություններ է մտցնում խալիֆայական դպրոցում։ Վերացնում է ծեծը, որվա շոգ ժամերին դադարեցնում է դասերը, դասամիջոցին և պարապմունքներից դուրս աշակերտների հետ խաղեր ու զբոսանքներ է կազմակերպում, յերեկոյան պահին առաջնորդում է գետը լողանալու, ինքն էլ լողալով նրանց հետ։ Այս բոլորը արտասովոր բաներ եյին Շապուհ Շահնազարյանցի աշակերտների համար, բայց ամենից ավելի արտակարգն ու զարմանալին աշակերտների նկատմամբ ունեցած Աբովյանի սիրալիր և փաղաքուշ վերաբերմունքն եր։ Փոքրիկ Հովհաննեսն ու իր ընկերներն առաջին անգամ իրենց կյանքում հանդիպում եյին մի մանկավարժի, որը ոչ միայն չեր պատժում, չեր հայհոյում, չեր սպառնում, այլև գուրգուրում եր, փայփայում, սիրում հայրաբար։ Աբովյանի այցելությունը Աշտարակի դպրոցին, անջնջելի տպավորություն է թողել Պռոշյանի վրա։ Աբովյանի անձնավորության նկատմամբ ունեցած հիացմունքի, դպրոցում մտցրած նրա բարեփոխությունների, աշակերտների հանդեպ ցուցաբերած փայփայանքի, մտերիմ և սիրալիր վերաբերմունքի մասին Պռոշյանը շատ անգամ է խոսել։ «Արձագանք»-ում տպված «Գյուղական վարժապետները» խորագիրն ունեցող հիշողության մեջ

Աբովյանին համեմատելով Աշտարակի կիսագրագետ տիրացու—վարժապետներին, նա վեր է հանում առաջինի մեծ արժանիքները և խարազանում ու ծաղրում է վերջիններին։

Աբովյանի այցելությունից հետո Շապուհը գյուղում և դպրոցում իր «մանկավարժական» վարկը ընկած տեսնելով, հեռանում է Աշտարակից։ Դպրոցը փակվում է։ Ստեփանը 1849 թվին Հովհաննեսին հանձնում է Մողնու վանքի միաբան Մարտիրոս Մժեժյանցի նորաբաց վանական դպրոցը։ Այստեղ ևս շուտով Հովհաննեսը դառնում է առաջին աշակերտը։ Ստեփանը մեռնելիս Մժեժյանին է հանձնարարում տնօրինելու իր սիրելի վորդու բախտը։ «Հայր սուրբ, իմ վորդուն քեզ եմ հանձնում, քեզ ել աստծուն, կուզես մարդ շինի, կուզես՝ ջուրը դցիր» («Հուշիկներ»)։ Այստեղ նա սովորում է յերկու տարի։ Հոր մահը Հովհաննեսին թողնում է բախտի քմահաճույքին։ Ավագ յեղբայրը հաղիվ հոգում եր ընտանիքի ծով կարիքը։ Հոր թողած ժառանգությունը միայն 300 ռուբլի պարտքն եր։ Հովհաննեսի ուսման հոգսը յեղբայրը հանձն առնել անկարող եր, իսկ նրա մեջ վառվում եր ուսման անհագ ծարավը։ Այդ տենչը մղում է նրան իրագործելու մի խիզախ ծրագիր. 1851 թվի աշնանը իր ուսուցիչ Մժեժյանի առաջնորդությամբ մորից և ավագ յեղբորից ծածուկ, Պերճը փորձում է փախչել արտասահման՝ Պոլսում կամ Փարիզում կրթությունը շարունակելու մտադրությամբ։ Սակայն իր անզգուշության հետևանքով փախուստի ծրագիրը բացվում է և խափանվում։

Ներսես հինգերորդ կաթողիկոսը (Աշտարակեցին)

կամենալով մանրամասն տեղեկանալ Մժեժյանցի փախուստի մասին, Եղմիածին և բերել տալիս Հովհաննեսին։ Աչքաբաց պատանին գրավում է կաթողիկոսի ուշադրությունը։ Հետագայում նրանից լավ հոգևորական պատրաստելու ակնկալությամբ, կաթողիկոսը վորդեգրում է ընդունակ և ուսումնածարավ Պռոշյանին և նույն ամեռը, 1852 թվի հունվարին ուղարկում է Թբիլիսի Ներսիսյան դպրոցը։ Պռոշյանը չտեսնված առաջադիմություն և ջանասիրություն է ցուցաբերում. կարճ ժամանակից նա դառնում է բոլորի ուշադրության առարկան։ Մի տարում մեջ է տալիս յերկու նախապատրաստական դասարանները և անցնում առաջին դասարանը, իսկ վեց ամիս հետո փոխադրվում է յերկրորդը։ Պռոշյանի Ներսիսյան դպրոցում յեղած տարիները այդ դպրոցի համար բարեփոխությունների և այդ առթիվ ծագած պայքարի տարիներ եյին։ Դա իր ժամանակում նշանավոր մանկավարժ Պետրոս Շանշյանի տեսչության շրջանն եր։ Դպրոցում մտցրած նրա կարգերը մեծ դժգոհություն առաջացրին պահպանողական հոգևորականների և ուսուցիչների մեջ։ Այդ դժգոհությունները խորացան և վերածվեցին լուրջ պայքարի՝ ընդեմ Շանշյանի և նրա մանկավարժական մեթոդների։ Պայքարի մեջ ընդգրկվեցին նաև դպրոցի բարձր դասարանների աշակերտները։ Պռոշյանը նույնպես շանշյանական եր։ 1855 թվի մայիսին փայլուն կերպով տալով ավարտական քննությունները, նա վերջացնում է դպրոցը յերրորդ դասարանից, ստանալով վորպես առաջին կարգի մրցանակ՝ «Ճառք Կիկերոնի յաղագս պատշաճից» գիրքը հետևյալ մակագրությամբ՝ «Մրցանակ առաջին կարգի

վանն գերազանց ջանասիրության, հառաջադիմության և պարկեշտ վարուց»։

Յերկար ժամանակ դպրոցի վարչությունն ավարտող աշակերտներին բաց չի թողնում այն հուսով, որ առաջիկա սեպտեմբերին կբացվի հետևյալ չորրորդ դասարանը։ Նոր դասարան չի բացվում և Պռոշյանը 1856 թվի հունվարին վերջնականապես թողնում է դպրոցը։

Դպրոցն ավարտելուց հետո Պռոշյանի համար սկսվում են ծանր որեր։ Ներսիսյան դպրոցի նպատակն եր աչքի ընկնող, առաջադեմ աշակերտներից պատրաստել յեկեղեցու սպասավորներ։ Պռոշյանը, որ, Աղայանի վկայությամբ, չուներ իր նմանը դպրոցում, որին բոլորը մատով եյին ցույց տալիս, հրաժարվում է կրոնավոր դառնալուց. պարզ է, որ Ներսես Աշտարակեցին դրանից հետո հաշտ աչքով չեր կարող նայել հանդուգն սանին։ Այդ անցքը Պռոշյանը հետևյալ կերպ է նկարագրում.

«Հերթը հասավ ինձ, յես տեղիցս չշարժվեցի։

—Ի՞նչ ես կանգնել, մոտ արի, գոչեց կաթողիկոսը

—Վո՛չ, յես ուրար չեմ ուզում, յես քահանա դառնալու ցանկություն չունիմ, ասացի ու կանգնած մնացի։

—Վնաս չունի, չես կամենում, չենք տալ, զոռով արջին կամ լծել չի լինի, ասաց ծիծաղելով կաթողիկոսն ու հետևյալին կանչեց։

Վոչ վոք վոչինչ չնկատեց, իսկ յես հասկացա, որ կաթողիկոսն ինձանից սրատմնա յեղավ, թեև վոչինչ չցույց տվեց. յես սխալված չեյի»։

Ներսես Աշտարակեցին զայրացած այն բանից, որ Պռոշյանը չկամեցավ «ուրար» հագնել. հոգևորական

դառնալ, չուզեց այնուհետև ճանաչել իր նախկին վորդեգրին։ Պռոշյանը մնաց վորբ ու անխնամ, անապատան։ Մերթ այս, մերթ այն ծանոթի տանը մի կերպ գլուխ պահելով, նա յերկար ժամանակ մի կերպ քարշ եր գալիս։ Սակայն վոչ մի խնդիր ու միջամտություն չմեղմեց կաթողիկոսի բարկությունը։ Կամակոր հոգևորականը չցանկացավ այնուհետև Պռոշյանին նյութապես ոգնել, ուստի վերջինս Թբիլիսիի գիմնազիայում կրթությունը շարունակելու հնարավորություն չունեցավ։ Նա միայն յերեք ամիս հաճախեց գիմնազիա, վորպես ազատ ունկնդիր, վորից հետո, ստիպված յեղավ թողնել ուսումը։

«Հուշիկներ»-ում նա այսպես է նկարագրում իր վիճակը. «Յեվ այսպես, յերեք ամիս է, վոր յես գիմնազիայի ունկնդիր եմ, փող չունեմ, միջոց չունեմ, դասական պիտույքի անհրաժեշտություն կա, Ներսես կաթողիկոսը բարկացած է, չի տալիս, ի՞նչ անեմ։ Մոլորվել պաշարվել եմ, գործ չի առաջ գնում, յեթե այսպես շարունակվի, յերբեք չեմ կարող քննություն տալ»։ Թբիլիսիում կրթությունը շարունակելու հույսը կորցրած, հաշտվելով թերուս մնալու մտքի հետ, Պռոշյանը վորոշում է մտնել աշխատանքի։ Շանշյանի խորհուրդով նա ընտրում է մանկավարժական ասպարեզը։ Այս բնագավառում Պռոշյանը յերկարամյա և արդյունավոր աշխատող է յեղել։ Նա առաջադիմական, վերանորոգչական ահագին գործ է կատարել հայկական դպրոցի պատմության մեջ, լինելով խալիֆայական դպրոցի դեմ առաջին պայքարողներից մեկը։ Անուրանալի է հատկապես այն խոշոր դերը, վոր կատարել է Պռոշյանը վորպես աղջկանց դպրոց-

ների առաջին հիմնող ամբողջ Կովկասում։ Վորպես վերանորոգիչ մոտ 45 տարի տեվող իր մանկավարժական աշխատանքների ընթացքում նա հարյուրավոր դժվարությունների յե հանդիպել, հալածվել ե հայ կղերից և կղերամիտներից, լիբերալ մամուլի խմբագիրներից ու գրչակներից, սակայն միշտ հավատարիմ ե մնացել ժողովրդական լուսավորության գործին։ Նրա բազմաթիվ ձեռնարկությունները խափանվել են, բայց կամքի արտակարգ ուժով և գործունեության բացառիկ յեռանդով զինված, նա յերբեք չի ընկճվել։ Հալածվելով մի վայրից, անցել ե մի այլ վայր, ամեն տեղ իր հետ տանելով նոր և թարմ մտքեր, ամենուրեք ծավալելով յեռանդ ու գործունեություն։

1856 թվի ամառը Պռոշյանը վերադառնում ե Աշտարակ, ուր խորը կարիքի մեջ ապրում եյին նրա մայրը, յեղբայրը և յերկու քույրը։ Նրանց վրա ծանրացել եր դերձակ Ստեփանի թողած պարտքը, վոր միայն տոկոսն եյին վճարել, վաճառելով պարտեզն ու մարագը։ Մի փոքրիկ այգու բերքով չորս հոգի հազիվ եյին ապրում. և ահա 19-ամյա Պերճը հայրենի գյուղում առաջին անգամ վոտք ե դնում ուսուցչական ասպարեզ, վորպեսզի թեթեացնի ընտանիքի նյութական ծանր վիճակը։

Այդ ժամանակ Աշտարակում գործում եր տիրացու Հովհաննեսի դպրոցը։ Դա մի խալիֆայական դպրոց եր։ Սկզբում Պռոշյանն ընկերանում ե նրան, վորպես ռուսաց լեզվի դասատու, բայց տիրացուն տեսնելով ընկերակցի մտավոր գերազանցությունը, չկամենալով «գիտնական» Պռոշյանի հետ աշխատել, թողնում ե դպրոցը։ Պռոշյանը փորձում ե բարեկարգել դպրո-

ցը։ Նա վերացնում է ծեծը, դասավանդման նոր ձևեր է մտցնում։ Կարճում է ամբողջ օրը տևող պարապմունքի ժամերը, ստեղծում է հոգաբարձություն և այլն։ Սակայն շուտով ծնողների մեջ դժգոհություն է առաջացնում հատկապես ծեծի և պատիժների բացակայությունը։ «Գիտես ինչ կա, վարժապետ, վճռապես ասաց Շամոն (դպրոցի հոգաբարձուն), յեթե դու մեր յերեխաներին չծեծես, մենք քեզ վորդի չենք թողուլ, Հովհաննես վարժապետն ենտեղ պատրաստ է»։ («Հուշիկներ»)։ Այս խոսքերից Պռոշյանն արտասվում է։ «Ցերկուսից մեկը, կամ պետք է հացից զրկվեյի, կամ դաղափարից։ Խոստովանում եմ, վերջինը զոհեցի առաջինին, թեպետ և շատ իզուր։ Ցերեք տարվա ամբողջ աշխատությանս վարձը հարյուր մանեթի հազիվ հասավ,—ասում է Պռոշյանը իր ձեռագիր «Ինքնակենսագրության» մեջ*)։ Բարոյական և նյութական խիստ ծանր հարվածներ կրեց Պռոշյանն այստեղ։ Դրժդոհ իր հայրենակիցներից, խռոված հոգով, յերկուսարի Աշտարակում պաշտոնավարելուց հետո գրպանում միայն ութ ռուբլի, նա թողնում և մեկնում է Թբիլիսի։ Այստեղ նա ծանր, սովատանջ օրեր է անցկացնում, ապրելով օրական հինգ կոպեկով։ Հինգ կոպեկի հացը չորս մասի յեր բաժանում և օրը չորս անգամ մեկական կտոր ուտում, վրայից էլ մի բաժակ ջուր էր խմում և այսպես անցկացնում օրերը։ Հյուծված կլիսասով կյանքից, նա ծանր հիվանդանում է։ Վերջապես նա հայոց լեզվի ուսուցչի և վերակացուի պաշտոն է ստանում Նիկողայոս Տեր-Հակոբյանցի նորաբաց մասնավոր դպրոցում. կարճ ժամա-

*) Ձեռագիրը գտնվում է Ազգային Գրական Թանգարանում։

նակից հետո՝ նաև ռուսաց լեզվի դասեր Ներսիսյան դպրոցի նախապատրաստական դասարանում։ Այսպիսով Պռոշյանի տնտեսական դրությունը մի փոքր բարելավվում է։



Հին Աշտարակը։

1859 թվի ապրիլի 18-ին, «Մեղու Հայաստանի» էջերում լույս է տեսնում նրա անդրանիկ գրական վաստակը՝ «Առ անձկալին Շուշան դուստր Վարդանա» աշխարհաբար բանաստեղծությունը, գրված բանաստեղծ դրամատուրգ Հակոբ Կարենյանի «Ծառուկ» բանաստեղծության ազդեցությամբ։ «Հուշիկներից» տեղեկանում ենք, որ Պռոշյանը աշխարհաբար լեզվով վոտանավոր և շարադրություններ գրելու փորձ և կատարել շատ վաղ, դեռևս Ներսիսյան դպրոցում աշակերտ լեղած տարիներին։ «Զգիտեմ ինչպես լեղավ, գրում է Պռոշյանը, վորտեղից մտքումս ծագեց, մի

անգամ և այն բոլորիս համար առաջին անգամը, յիս մեր տեղական բարբառով մի վոտանավոր գրեցի Աշտարակից Թիֆլիս իմ ճանապարհորդությունս։ Վոտանավորն ընկերների կողմից ծաղրի յե յենթարկվում աշխարհաբար լինելու պատճառով, սակայն հայոց լեզվի ուսուցիչ Հակոբ Կարենյանցը հավանություն է տալիս, ասելով, վոր Պռոշյանը ճիշտ է հասկացել ժամանակի պահանջը և վոգին։ «Այդ որվանից հետո,—ավելացնում է հեղինակը,—իմ շաբաթական գրած յերկու շարադրություններից մինը գրաբար, մինն աշխարհաբար եր»։

Պռոշյանին գրողի հռչակ տվեց 1860 թվին լույս տեսած «Սոս և Վարդիթեր վեպը»։ Այդ նշանավոր գործի հղացումը կապված է Պռոշյանի ստեղծագործության համար մի նշանակալից դեպքի հետ։ 1858 թվի ոգոստոսին, այսինքն այն ժամանակ, յերբ նա Թբիլիսիում շրջում եր անգործ նյութական ամենածանր պայմաններում, մի յերեկո անձրևից հալածված, թրջված մինչև վոսկորները, իրեն մի կերպ ձգում է համագյուղացի, գիմնազիայի վերակացու և ուսուցիչ Հովհաննես Տեր-Հովսեփյանցի տունը։ Տան տերը վոտից գլուխ հանդերձափոխում է նրան, տանում է իր սենյակը և թեյի հետ մի նոր, Պռոշյանի համար անծանոթ հայերեն գիրք դնելով սեղանին, ինքը յերկու ժամով գնում է մյուս սենյակը, իր գիշերոթիկ աշակերտների հետ պարապելու։ Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպն եր դա, մի չտեսնված յերևույթ այն ժամանակվա համար։ Գրքի վերնագիրը և հեղինակի անունը վառում են Պռոշյանի հետաքրքրությունը։ Կլանված ընթերցանությամբ նա չի նկատում թե

ինչպես են անցնում ժամերը... Սթափվում է այն ժամանակ, երբ գիրքը վերջանում է։ «Դժվար է ինձ պատմել այն տպավորությունը,— գրում է Պուշկինը «Հուշիկներ»-ում,—և այն հեղհեղուկ զգացմունքները, որ անդադար ներսումս միմյանց հետևում էին. մի բոպե արտասուք տրտմաթախիծ, մյուս վայրկյանին՝ ուրախության արտասուք, յերբորդ ակնթարթին՝ նրստած տեղիցս անհեթեթ վոստվոստումներ։ Ցես ինչ գիտեմ, ինչեր չեյին պատահում ինձ. լավ եր տանտերս գնացել եր և մոտս վոչ վոք չկար, ապա թե վոչ, արժեր կապկապել և հիմարանոց տանել»։ Հենց այստեղ Պուշկինն ուխտում է «աշակերտել» Աբովյանին, անմահացնել Աշտարակի անունը։ «Ահա իմ ձեռքը, գիմում է Պուշկինը Տեր-Հովսեփյանին, յերբ նա ներս է մտնում, յես Աբովյանին աշակերտելու յեմ»։ Նույն գիշեր ընթրիքից հետո նա յերկրորդ անգամ ծայրե ի ծայր կարդում է «Վերք Հայաստանի»-ն։ «Աքաղաղը հինգ բերան կանչել եր, որ յես տեղս մտա, քնիս մեջ շարունակ Աշտարակումն եյի ման գալիս»...

Նյութապես փոքր ապահովվելուց հետո Պուշկինը ձեռնարկում է իր վորոշման իրագործմանը։ «Ծունկս սեղան եյի շինել ու գրում եյի, «Սոս և Վարդիթերն» եյի գրում։ «Առաջին գիշերը «Սոս և Վարդիթերիս» առաջին գլուխը կարեցի»։ Վեպի առաջին գլուխը ավարտելուց հետո ներկայացնում է Հակոբ Կարենյանցին. վերջինս մեծ ուշադրությամբ կարդում և խորհուրդ է տալիս անպայման շարունակել։ «Աբովյանը փակ լիզուդ բաց արավ, ասում է նա, շարունակիր, չթողնես։ Նա իր Քանաքեռն անմահացրեց, դու էլ քո Աշտարակն անմահացրու» («Հուշիկներ»)։ Պուշ-

յանը նոր զարկ տուցած այս խրախուսանքից, շարունակում է և 1859 թվի վերջերում ավարտում վեպը։

Դեռևս 1856 թվին, Թբիլիսիի գիմնազիայի հայ աշակերտներից և Ներսիսյան դպրոցի նորավարտներից մի քանիսը կազմել էին գրական շրջան «Սիրազումար ժողով» անունով։ Խմբակին մասնակցում էր նաև Պռոշյանը։ Հավաքույթները տեղի էին ունենում շաբաթը մի անգամ։ «Սիրազումար ժողովը» իր գոյությունը շարունակում էր նաև 1859-60 թվերին։ Խմբակի ղեկավար Ցերիցյանի պահանջով Պռոշյանը հավաքույթներից մեկում ընթերցում է «Սոս և Վարդիթեր»-ը։ սրանով էլ վորոշվում է գրքի բախտը և Պռոշյանի ապագան։ Ցերիցյանը, հիացած գրքի տպավորությունից, հաջորդ որը Պռոշյանին ներկայացնում է «Կռունկ» ամսագրի ապագա հրատարակիչներին։ Նրանք ևս ցնծությամբ են ընդունում «Սոս և Վարդիթեր»-ը։ «Կռունկի» խմբագրի՝ Աղաբեկյանի առաջարկությամբ, վիպասանը թողնում է դասերը և դառնում է ամսագրի խմբագրության անդամ—աշխատակից։ 1860 թ. հունվարին լույս տեսավ «Կռունկ»-ի առաջին համարը, վորտեղ սկսվեց տպագրվել «Սոս և Վարդիթերը»։ Վեպը նույն թվին հրատարակվեց նաև առանձին գրքով։

«Սոս և Վարդիթեր»-ը հռչակեց հեղինակի անունը, սակայն նյութապես չապահովեց նրան։ Առանձին գրքով լույս տեսած վեց հարյուր որինակից հարյուր հիսուն որինակ ուղարկվեց բաժանորդներին, մնացածը հեղինակի համար բեռ դարձավ և նա ստիպված յեղավ հաստատություններին ու բարեկամներին նվիրելով ոձիքը թափ տալ։ «Ցերևակայական ցնորքներիս և ինք-

նասիրությանս տեղիք տվեց տխուր իրականությունը. անընթեր ցասիրությունը մերայնոց մեջ շոշափելի կերպով կենդանացավ առաջիս և յես կիսահուսահատ սրտակոտոր թողի իմ խմբագրությունը» («Ինքնակենսագրություն»)։

Ստեղծագործական վոգևորությանը հաջորդում է առաջին հուսախաբությունը։ Այն շրջանում Պռոշյանի գրքի իսկական գնահատողները—գյուղի և քաղաքի աշխատավորները—դեռևս անգրագետ էին։ Նրանց չեր կարող հասնել Պռոշյանի յերկը, իսկ իշխող կղերա—պահպանողական հոսանքի ներկայացուցիչները ամեն ջանք գործ դրին սպանելու «Պռոշյանի» դեռևս նոր ծաղկող գրական տաղանդը։

Կղերա-պահպանողական հոսանքի որդան «Մեղուն» առաջինը վայնասուն բարձրացրեց «Սոս և Վարդիթեր»-ի դեմ։ Վեպում նկարագրված Վարդիթերի և Անուշի յեկեղեցում տեղի ունեցած խոսակցությունը սիրո շուրջը «Մեղուն» համարում է սրբապղծություն և միանգամայն անվայել հայ նահապետական գեղկուհիներին։

Նալբանդյանի վկայությամբ, «Սոս և Վարդիթեր»-ը ժամանակին տեղիք է տվել բազմաթիվ աննպաստ խոսակցությունների՝ ինտելիգենցիայի պահպանողական շրջաններում։

Յերբ «Սոս և Վարդիթեր» վեպով հրապարակ յելավ Պռոշյանը, ասպարեզի վրա կար միայն մի վեպ—դա Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն եր։ Ժողովրդի կյանքից և ժողովրդի լեզվով գրած միակ վեպն եր այդ, վոր դարագլուխ կազմեց մեր գրականության մեջ։ «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանում ուժեղ կեր-

պով քննադատվում էր մեր հին գրականության կրոնական—սխոլաստիկ ուղղությունը։ Այնտեղ շեշտակի կերպով դրված էր այն ժամանակի համար հրամայական մի խնդիր. դա գրականությամբ ժողովրդին ծառայելու պահանջն էր, ժողովրդի մասին և ժողովրդի համար գրելու անհրաժեշտությունը։ Չնայած այս պահանջը առաջին անգամ գիտակցություն դառավ Աբովյանի մոտ, սակայն նրա իսկական իրագործողը հանդիսացավ Պռոշյանը, վորի մոտ այն առաջանում է միանգամայն անկախ և ինքնուրույնաբար։ Կարդալով «Վերք Հայաստանի»-ն, Պռոշյանն ասում է. «Յեվ ընչի զուրկ պահել մեր ժողովրդին ընթերցասիրությունից, մինչև յերբ մեր գրականությունը գրագետ դասակարգի սեփականություն մնա»։ Գրականությամբ ժողովրդին ծառայելու ցանկությունն և մղում տվել Պռոշյանի ստեղծագործությանը և այս բանում անշուշտ վորոշ դեր է կատարել Աբովյանի վեպը։

Մինչև Աբովյանի վեպին ծանոթանալը, Պռոշյանը բեռնավորված էր ժողովրդական կյանքի ու սովորությունների վերաբերյալ չափազանց հարուստ տեղեկություններով։ 1856-58 թվերին, յերբ Պռոշյանն ուսուցիչ էր հայրենի գյուղում և Մողնու վանքի գործակալի քարտուղար, նա խորացրեց և ընդարձակեց ժողովրդական կյանքի մասին իր մանկության տարիների բաղմաղան տպավորությունները նոր ու հասուն տպավորություններով։ Կյանքը ևս հարստացել էր նորանոր յերևույթներով։ Այդ հարուստ նյութը ոգտագործելու առիթ էր պետք. Աբովյանի վեպն, այսպի-

սով, յելք տվեց մի այն Պռոշյանի մեջ կուտակված պոտենցիալ հնարավորություններին։

«Սոս և Վարդիթեր» վեպի համառոտ բովանդակությունն այս է. աշտարակի յերկու յերիտասարդ, Սոսը և Վարդիթերը, ամենաանկեղծ, նվիրական սիրով սիրում են միմյանց։ Աղջկա ծնողներն սկզբում դեմ են լինում այդ սիրուն, սակայն Վարդիթերի անդրանիկ յեղբոր՝ Արշավիրի և Սոսի մտերիմ ընկերոջ՝ Գարեգնի ազդեցությամբ Վարդիթերի ծնողներն իրենց վերաբերմունքը փոխում են։ Յերբ արդեն թվում եր, թե բոլոր խոչընդոտները հաղթահարված են և սիրահարները պիտի հասնեն իրենց փափագին, Սոսի փեսան՝ Տիրանը 15 ռուբլու համար քանդում և արդեն գլուխ յեկած գործը։ Արշավիրը ևս, վոր մի ժամանակ ձգտում եր հաջողացնել Սոսի և Վարդիթերի ամուսնությունը, նպաստում է գործի խափանվելուն։ Սիրահարները անկարող են լինում տանել այս ծանր հարվածը։ Իրար հասնելու հույսը կորցրած, նրանք մեռնում են ամենավոդբերգական մահով. Սոսը խելագարվում է, սարերն ընկնում, Վարդիթերը հիվանդանում է, մեռնում. լսելով Վարդիթերի մահվան բոթը Սոսը ևս մեռնում է։

Վեպի ֆաբուլան, ինչպես տեսնում ենք, նայիվ է ու սովորական։ Հասկանալի յե, Սոս և Վարդիթերի սիրո ռոմանտիկ պատմությունը չե, վոր արժեքավոր և դարձնում այս յերկը։

«Սոս և Վարդիթեր»-ը մի վեպ է, վոր գրված է 22 տարեկան անփորձ պատանու ձեռքով և այն էլ այնպիսի շրջանում, յերբ գրականության մեջ և մտքերի վրա իշխում եր կեղծ դասական ուղղությունը, յերբ ժողովրդական կյանքը իրական գույներով և գծերով

վերարտադրելու փորձեր համարյա չկային։ Անխուսափելիորեն այդ վեպը պիտի ունենար խոշոր թերություններ։ Յեվ իրոք, այնտեղ կան հեղինակի յերևակայությամբ ստեղծված բազմաթիվ անբնական ու հնարովի դրություններ, տեսարաններ ու պատկերներ. սակայն անբնականն ու հնարովին կորչում,



Այն տունը, վորտեղ ծնվել է Գառոյանի վեպի հերոսը՝ Սոսը։

են վեպում պատկերած իրական կյանքի հարուստ և բազմաբովանդակ նկարագրություններով մեջ։ Դրանում յերևում է Գառոյանի դիտելու և վերարտադրելու ահագին կարողությունը։ «Սոս և Վարդիթեր»-ի արժեքը կայանում է գյուղական կյանքի և յերևույթների բազմակողմանի և ռեալ նկարագրության մեջ։ Ընթերցողի առաջ պատկերանում է 40-ական թվականների գյուղն իր առորյայով, իր ուրախություն-

ներով և դառնություններով, դարերով սրբագործված ավանդական սովորություններով։

Պռոշյանի «Սոս և Վարդիթեր»-ը աշխարհիկ գրականության յերկրորդ հիմնաքարը հանդիսացավ։ Մեծ դեմոկրատ և հեղափոխական Միքայել Նալբանդյանը «Սոս և Վարդիթեր»-ի առաջին ճիշտ գնահատողն է հանդիսացել։ Նալբանդյանը նախ և առաջ վեր է հանել պատմական այն խոշոր դերը, որ խաղաց «Սոս և Վարդիթեր»-ը, Աբովյանի «Վերք Հայաստանի»-ի հետ, հիմք դնելով մեր նորագույն գրականությանը։

Նալբանդյանը ցույց է տվել, որ Պռոշյանը գրական ասպարեզ է մտել կյանքի ռեալ ճանաչողության հսկայական պաշարով. նա ռեալիզմի մեջ է տեսել Պռոշյանի վեպի արժեքն ու ուժը, հիմնական թերություն համարելով հեղինակի յերևակայությամբ ստեղծված անճշտությունները, շեղումները բնականի և իրականի սահմանից։ «Սոս և Վարդիթեր»-ի մեջ Նալբանդյանը տեսել է սոցիալական վեպի այդ սաղմերը, որոնցից պիտի զարգանային «Հացի խնդիր»-ը, «Ցեցեր»-ը «Բղդեն», «Հունոն»—Պռոշյանի ամենաարժեքավոր վեպերը։

«Սոս և Վարդիթեր» վեպում առանձին ուշադրության է արժանի չքավոր գյուղացի Վայկունը։ Նա դատապարտում է քեթխուդաների շահասիրությունը, դժգոհում իր վրա դրած հարկերի ծանրություններից, բողոքում նրանց անողորմ արարքի դեմ։

«Ես ի՞նչ ա, հիմի խարջ են կիտում, յես մի խեղճ մարդ եմ, նրանք ինչ վոր ինձ կըհասներ խարջը տալու, երկու ենքան են առել, սաքի ասում են, վոր գեղի միջին տարեկան մասրաֆ (ծախք) ա եղել, փչացել

ա, պիտի լրացնենք, համա վորտեղ, քոմմա իրանք են ուտում, քյասիբ քյուսուբի տունը քանդում, իրանցը շինում. յես գրողամնա մի հիքի ունիմ, ինձ տարել են զոռով կապել իրենք հիքիատիրոջ հետ, թե արի խարջ տուր. էլ չեն ասում թե, աչառը գոմշի հետ կարա լուծն անի»։ Արշամը դատապարտելով Վայկունու ընդդիմախոսներին՝ Սոսին և Պարեսին հաստատում է նրա խոսքերի ճշմարտությունը, իր կողմից ավելացնելով նոր փաստեր «Վայկուն ափոր խոսքերն ավետարանի կողքին գրված են,—ասում է Արշամը,—սաքի ինչի՞ էք երկու յերեսանություն անում, կողմապահ ըլում. հիմի ես հո մեր պապական հիքին ա, ուղենան կխլեն կտան ուրիշի։ Քանի՞ քանի՞ որինակներ կան, վոր ընչանք քեզնից մի ոգուտ չեն ունեցել, բանըդ չեն շինել։»

Վայկունը և Արշամը պարզ գիտակցում են, վոր գյուղի ապագա ցեցերը՝ քեթխուդեքը ծառայում են վոչ թե համայնքին, այլ իրենց սեփական շահերին։ Հենց դրա դեմ էլ նրանք ուղղում են իրենց բողոքը։

Նալբանդյանը վերոհիշյալ փաստին վերաբերվել է մեծ ուշադրությամբ, հանձին Վայկունի և Արշամի նատեսել է սոցիալական բողոքի առաջին ներկայացուցիչներին, վորոնց կարիքը այնպես խիստ էր զգացվում այն ժամանակվա մեր մռայլ ու անշարժ իրականության մեջ։ Մեծ հրապարակախոսը խորը հրճվանք և արտահայտել Արշամի նկատմամբ, տեսնելով նրա մեջ նոր ժամանակի մարդուն։

Ուշագրավ է նաև Տիրանը։ Նա Սաքոյի, Բղդեյի և Բալասան աղայի նախատիպն է։ Գյուղի սոցիալական զարգացման հաջորդ շրջանում տասնհինգ ռուբլով

«հոգին ծախող» այդ մանր շահամոլից անխուսափելիորեն պիտի զարգանային գյուղական ժողովրդի արնախում տզրուկները։

*
* *

Պռոշյանը առ ժամանակ թողնում է գրականությունը և կրկին վերադառնում մանկավարժության բնագավառը. այս անգամ նա փորձում է իրագործել մի ուրիշ դժվարին ձեռնարկություն—հիմնել աղջկանց դպրոց։ «Այն ժամանակ Թիֆլիսում հայ աղջկանց դպրոցի գոյությունն ամենքին ծաղրելի էր թվում... Հրեշավոր բան էր թվում ավելի զարգացած ոտարազգիներին, թող թե հայերին՝ աղջկանց ուսումը»։

Առանց յերկյուղ կրելու գործի դժվարությունից, առանց հարկավոր ոժանդակության ակնկալության, Պռոշյանն իրեն հատուկ վճռականությամբ սկսում է իրագործել իր վաղուցվա մտադրությունը։ Դասերը սկսում է, ունենալով միայն յերկու աշակերտուհի։ Կարճ ժամանակից հետո աշակերտուհիների թիվը հասնում է յերեսունի։ Գտնվում են նախանձախնդիր մարդիկ, վորոնք հանձն են առնում դպրոցի հոգաբարձությունը և նյութական ապահովությունը։ Յեվ այսպես, հիմնվում է Գայանյան աղջկանց դպրոցը, վոր առաջինն էր Թբիլիսիում և ամբողջ Կովկասում։ Պռոշյանի հաջող փորձից հետո, քաղաքի զանազան թաղերում բացվում են նույնանման դպրոցներ։

Զափազանց խոշոր դեր է կատարել Պռոշյանը նաև թատրոնի ասպարիզում։ Մանկավարժական աշխատանքներին զուգընթաց նա ձեռնարկում է Թբիլի-

սիում մշտական հայկական թատրոն ստեղծելու գործը և այս բանում մեծ ջանասիրություն ու կամք է ցուցաբերում։ Մի խումբ թատերասեր յերիտասարդների գլուխ անցած, ծեծում և Թբիլիսիի այն ժամանակվա բոլոր ազդեցիկ մարդկանց դռները, վորոնք կարող եյին շատ թե քիչ ոգտակար լինել այդ գործում։ Հաշտեցնում և գժտված, այն ժամանակվա յերկու նշանավոր հայ դրամատուրգներին, Հակոբ Կարենյանին և Միքայել Պատկանյանին։ Հակառակ վերջիններիս դիմադրություններին, Պռոշյանը 1863 թվի հունվարին գլուխ և բերում առաջին ներկայացումը, վորը չտեսնված հաջողություն և ունենում։ Բեմադրվում և Պռոշյանի ձեռքով արարատյան բարբառի վերածած Ա. Գալֆայանի «Արշակ Բ.» վոդբերգությունը։ «Հայոց թատրոնի սկզբնավորությունը Թիֆլիսում» հոդվածում Պռոշյանը գրում է. «Այն ինչ խառն բազմություն եր, ասված իմ, վոր միմյանց գլխի ձկան ծվարի նման ճխլվել եյին, հնարավորություն չկար տոմս ստանալու, իրար գլուխ են ջարդում, իրար ուսի են բարձրանում։ Արիստոկրատ, վաճառական, արհեստավոր, կինտո, դատարկաշրջիկ, արկածախնդիր՝ ամենքյան լուսամուտի առաջ բռնած տոմսակ են աղաղակում, թղթադրամները ոդի մեջ ծածանում են» («Թատրոն», 1893 թ. №—1)։ Ներկայացումը կրկնվում և հասարակության՝ գլխավորապես համքարության պահանջով։ Թբիլիսիի համքյարը, յերիտասարդ թատերասերներին ձեռքերի վրա տանում և ուստաբաշի Զառավ Գիքոյի տունը, վորտեղ նրանց համար խնջույք եր պատրաստված։ Այս բանն ավելի ևս խրախուսում և յերիտասարդ թատերասերներին։ Ստեղծ-

վում է թատրոնական հոգաբարձություն։ Գործը կարգի չի ընկնում։

Միայն զարմանալ կարելի չի Պռոշյանի համարձակության և ինքնավստահության վրա։ Այն ժամանակվա դժվարին պայմաններում, երբ գործունյա մարդու ամեն քայլափոխը տասնյակ խոչընդոտի էր հանդիպում, երբ անուն և ուժ ունեցող մարդիկ հեռու էին փախչում գործից, վախենալով դժվարություններից, դեռևս անհայտ ու անանուն չերիտասարդը կարողանում է այդքան գործ հաջողացնել և այն էլ նյութական մեծ զրկանքների մեջ, կյանքի ամենաաննպաստ պայմաններում։ «Եթե ընթերցողը կմտածի գտնել սենյակումս շենք ու շնորքին կահկարասիք, շատ կսխալվի. թե իմ տունը, թե տատրակի բունը մեկ եր»։ «Վառելիքի սղությունից տունս տաքանում եր չեկող հյուրերի շնչով», իսկ հյուրեր չեղած ժամանակ «գրիչը մատներիս մեջ հարմար բռնելու համար վառարանի տեղ ծառայում եր ծոցս»։

Պռոշյանի ջանքերով Թբիլիսիում հայ ժողովրդական թատրոն ստեղծելու գործը հաստատուն հունի մեջ մտնելուց հետո, ասպարեզ չեկան նոր և կարող ուժեր հանձին Գ. Զմշկյանի և ուրիշների։ Պռոշյանն այս ասպարեզում իր անելիքն ավարտել եր։

Պռոշյանի հանդուգն բնավորության լավագույն նկարագիրը տվել է Դ. Աղայանը, վոր նրան գիտեր ավելի լավ, քան մեկ ուրիշը։ Նա գրում է. «Այդ ժամանակ Պռոշյանցը թեև դպրոցից նոր եր դուրս չեկել, բայց դպրոցականի քաշվող և ամոթխած բնավորություն չուներ, այլ չափից դուրս չերեսաբաց և համարձակ եր։ Նոր սերունդը կյանքի նորոգություն եր պա-

հանջում։ Նորոգության առաքյալ լինելու համար ամոթխածությունը ձեռնտու հատկություն չեր, պետք եր քաջություն, վստահություն, համարձակություն և մինչև անգամ հանդգնություն և ստահակություն։ Պռոշյանցն այս բոլոր զենքերով զրահավորված եր հնության դեմ պատերազմ մղելու համար»։ Իրոք վոր Պռոշյանցը նովատոր եր, նովատորին հատուկ խիզախ քնավորությամբ։

1863 թվին Պետրոս Շանշյանը հրավիրվում է Շուշվա հոգևոր դպրոցի տեսուչ, վորն իր հերթին հրավիրում է Պռոշյանին՝ նույն դպրոցի լեզվի դասատու և տեսչի տգնական։ Տեսնելով Գայանյան դպրոցը հաստատուն հիմքի վրա դրած, գործի շարունակությունը թողնելով ընկերներին, նա մեկնում է Շուշի այն գիտակցությամբ, թե գավառում գործիչների ավելի մեծ կարիք կա, քան Թբիլիսիում։ Իր առաջին փորձից խրախուսված, այստեղ ևս Պռոշյանը հիմնում է աղջկանց դպրոց—«Շուշվա Մարիամյան աղջկանց ուսումնարանը»։ Այս տարիները Շուշվա կյանքում աննախընթաց տարիներ եյին։ Սակայն, ինչպես Ներսիսյան դպրոցում, այնպես և այստեղ, Շանշյանի ու նրա համախոհների մանկավարժական առաջադիմական—վերանորոգչական գործունեության դեմ խավարամիտները սկսում են իրենց դավադիր գործունեությունը։ Վերջիններիս ոգության և գալիս Եչմիածնի հոգևոր իշխանությունը։ Շանշյանի և նրա գործակիցների բանավոր և գրավոր դիմումները կաթողիկոսին, անհետևանք են անցնում։ Շանշյանականների գործը պարտվում է։

1865 թվին Թբիլիսիում յերկարատև և ծանր հի-

վանդությունից Պռոշյանը փրկվում է, վորից հետո առողջությունը վերականգնելու համար, բժիշկների խորհուրդով, մեկնում է Յերևան։ Այստեղ նա ապրուստի միջոց և հայթայթում լուսանկարչությամբ։ Ի դեպ պիտի ասել, վոր Պռոշյանը դեռևս 1863 թվին «Կռունկ» ամսագրի խմբագրության հաշվով սովորում է լուսանկարչություն և ձեռք և բերում գործիքներ։ Պռոշյանին հետագայում շատ անգամ է պետք գալիս այդ արհեստը։ Ամեն անգամ, յերբ նա ուսուցչական ասպարեզից զանազան պատճառներով հեռու է յեղել, իրբև հաց աշխատելու միջոցի՝ դիմել է լուսանկարչությանը։

1866 թվին Պռոշյանը մտադրվում է Թավրիզ անցնել, այնտեղ աշխատել մի տարի, ապա մեկնել Հնդկաստան։ Հավանորեն նոր յերկրներ տեսնելու դիտավորությամբ եր Պռոշյանն այդպիսի հեռավոր ճանապարհորդություն կատարելու։ Նույն թվի ձմեռն անց է կացնում Նախիջևանում և Որդուբադում։ Թավրիզ գնալու համար ճանապարհածախս է պատրաստում լուսանկարչությամբ։ Միևնույն դիտավորությամբ գընում է Ագուլիս։ Լսած լինելով Պռոշյանի անունը, ագուլեցիք հորդորում են թողնել Թավրիզ գնալու մտադրությունը և տեղում մի կանոնավոր դպրոց հիմնել։ Պռոշյանը համաձայնում է և մնում։ Սկսում է գործի նախապատրաստությունը, վորը և արագ թափով առաջ է գնում։ Յերկու շաբաթվա ընթացքում 25 հազար ռուբլի նվեր է ժողովվում բացվելիք յերկու սեռի դպրոցների նյութական ապահովության համար։ Պռոշյանի ձեռքով կազմվում և գյուղական հասարակության ժողովում հաստատվում է դպրոցների

կանոնադրությունը և ներկայացվում կաթողիկոսին ի հաստատություն։ Այստեղից էլ սկսվում է գործի դժվարությունը. կաթողիկոսը տհաճությամբ է ընդունում նրանց։ «Գլխներիս սառը ջուր մաղվեցավ,— գրում է նա «Հուշիկների» անտիպ մասում,—ծակուռուտների լարած վորոգայթները հաստատուն են յեղել. նրանք հաջողացրել են»։ Մեծ դժվարությամբ, վերջապես, ստանում են կաթողիկոսի թույլտվությունը դպրոց բացելու վերաբերյալ և վերադառնում։ Թբիլիսիից և Յերևանից Պռոշյանը ուսուցիչներ է հրավիրում։ Պարապմունքներն սկսվում են և առաջ են գնում մեծ հաջողությամբ։ Բայց առժամանակյա խաղաղությունը շուտով վրդովվում է։ Ագուլիսի փողոցներում՝ պատերին փակցրած՝ Պռոշյանին վարկաբեկող տոմսակներ են հայտնվում։ Տոմսերի հեղինակները Ագուլիսի տերտերներն ու տիրացուներն եյին, վորոնք ցանկանում եյին քայքայել դպրոցը։ Խավարի քուրմերը փորձում են քայքայել ժողովրդի ձեռքով գլուխ բերված լուսավորության գործը։

1868 թվի սկզբներին Ագուլիսում հայտնվում է վարդապետ Գևորգ Արամյանը, վոր Ագուլիս եր յեկել խավարամիտ Սարգիս Զալալյանի թելադրանքով, դպրոցը քայքայելու դիտավորությամբ։ «Դու ղրկված ես քայքայելու այդ ոձի բունը»—գրում է Զալալյանը Արամյանին։ Նույն նամակում նա այսպես է հորդորում իր գործակալին։ «Գործիր, վարդապետ, մեր սկսածը պատերազմ է, այդ ֆարմասիոններից մեր պատիվը վոտնատակ գնալու յե մի որ, յեթե ցայսոր չի գնացել»։ Արամյանը Ագուլիսից հեռանում է խայտառակված և անարգված։

Պռոշյանի դեմ լարվող դավերի վերջին հերոսը Ագուլիսում վարդապետ Մեսրոպ Սմբատյանն էր։ Այս խարդախ հոգևորականը, վոր ձևանում էր Պռոշյանին «սրտակից բարեկամ», փորձ է անում վերջինիս և դպրոցի հոգաբարձության միջև գժտություն առաջացնել։ Դավադրությունը բացվում է և Սմբատյանը ամոթահար հեռացվում է Ագուլիսից։ Սակայն շատ չանցած նույն Սմբատյանի շնորհիվ ստացվում է սինոդի հրամանը, վորի ուժով Պռոշյանը «իբրև անբարոյականացնող, մոլորեցնող պայծառամիտ ազուլեցիներին» հեռացվում է թե տեսչությունից և թե ուսուցչությունից։ Սինոդի հրամանը սպառնում է, յեթե հոգաբարձուներն ընդդիմանան, սինոդը քաղաքական իշխանության կդիմի և կվարվի այնպես, ինչպես ինքն է իմանում։ 1868 թվի հունիսի վերջին Պռոշյանը ընդմիշտ թողնում է Ագուլիսը։

Գյուղական հասարակությունից սիրված և հարգված ժողովրդական ուսուցիչը չարաչար հալածվում է կըղերից...

868 թվի ամառը Պռոշյանը անց է կացնում իր հայրենի գյուղում՝ Աշտարակում։ Դեռևս նոր պաշտոնազուրկ յեղած վիպասանին վոգևորում է գործունեության մի նոր իդեա։ Այդ ժամանակ Աշտարակ գյուղում որինավոր դպրոց չկար։ Պռոշյանը փորձ է անում յերկու քահանաների ձեռքով յերկու թայֆայի պառակտված գյուղը միավորել և մի կանոնավոր դպրոց հիմնել։ «Քահանայք միմյանց դեմ ատելություն տարածելով ժողովուրդն ել նույն տրամադրության մեջ են պահել»։ Հասարակական ժողով է գումարվում. կարդացվում է Պռոշյանի ձեռքով կազմ-

ված դպրոցի կանոնադրությունը, ընտրվում հոգաբարձություն։ Սակայն հաջորդ որը, երբ պիտի միացնեին յերկու դպրոցների աշակերտներին, վորոնց կըրթությունը և դաստիարակությունը մինչ այդ հանձնված եր կիսագրագետ տիրացուներին, Մարիանե յեկեղեցու քահանա Տեր-Սարգիսը՝ կաթողիկոսի ռեակցիոն գաղափարների թարգման Նիկողայոս Տեր-Հովսեփյանցի [1] դրդումով գործը խափանում է։ Նա մերկացրած սրով վակում է հոգաբարձուների ճանապարհը և սպառնում աշակերտներին սրախողխող անել, յեթե վերջիններս կհամարձակվեն վոտները դուրս դնել Մարիանեյի բակից։ Պռոշյանը սրտաբեկ թողնում է Աշտարակը և մեկնում Թբիլիսի։ Այս դեպքից հետո Պռոշյանը «վատ վարքի» և յեկեղեցուն «վատ ծառայելու» համար զրկվում է ուսուցչության իրավունքից։ Այս և հետագա մի շարք տարիներին Պռոշյանի հիմնական զբաղմունքը լուսանկարչություններ։ «Մշակ» լրագրի 1872 թվի № 6-ում տպագրված է հետևյալ հայտարարությունը. «Ֆոտոգրաֆ Պերճ Պռոշյանցը հայտնում է յուր շնորհակալությունը Թիֆլիզո հարգո հասարակությանը այն համակրության համար, վոր նա ցույց է տվել դեպի յուր ֆոտոգրաֆիան։

Պերճը հիմի ել պատիվ է համարում իրեն հայտնել, վոր ինքը ստացել և արտասահմանից ֆոտոգրաֆիայի նոր դեղորայք և մաքուր պատկերներ հանելու մեթոդաներ։

---

1 Վիպասանը հետագայում Տեր-Սարգսից կերտել է Միկիտան Սաքոյի տիպը, Նիկողայոս Տեր-Հովսեփյանից՝ Բալասան աղալի։ Այս հանգամանքը, վոր նույնիսկ գրականագետներից շատերին անհայտ է, Աշտարակում հանրածանոթ փաստ է։

Նույնպես հանում է նա պատկերներ և քթի աղլուխի վրա բավականի եժան գնով։

Պերճ Պռոշյանցը հույս ունի, որ այսուհետև Թիֆլիզի պատվելի հասարակությունը չի թողուլ առանց ուշադրության յուր գործարանը, որ գտնվում է Միքայելովսկի կամրջի վրա»։

Ճակատագրի վորպեսզի հեգնանք։ «Թիֆլիզը հարգո հասարակությունը» համակրություն և ցույց տվել վոչ թե վիպասան, այլ լուսանկարիչ Պռոշյանին, վոչ թե «Սոս և Վարդիթեր»-ի անմահ հեղինակին. այլ քթի աղլուխի վրա նոր «մետոդաներով» եժան գնով նկարներ հանողին։ Այդ նրանից չէր արդյոք, որ Պռոշյանի լուսանկարչական ապարատը արտասահմանյան լավ թղթի և դեղորայքի շնորհիվ ընդունակ եր սիրաշահելու հայ բուրժուայի վառասիրությունը՝ ցույց տալով նրա արտաքին փայլը միայն, յերբեմն նույնիսկ հղկելով և կոկելով նրա անտաշ մռութը, իսկ վիպասան Պռոշյանի ստեղծագործական ապարատը զուրկ եր այդ հատկությունից և ընդհակառակը ոժռված եր գիրեցիկ արտաքինի տակ թաղնված այլանդակ իրականությունը մերկացնելու կարողությամբ։

1872 թվին Պռոշյանը հրավիրվում է աշխատելու «Մշակ» լրագրին։ Արծրունին հայերենին վատ եր տիրապետում և անծանոթ եր հայ կյանքին, ուստի «Մշակ»-ը «հայության շավղով» տանելու համար նա իրեն շրջապատում է Հայաստանի զանազան գավառների կյանքին քաջ ծանոթ և հայերենին հմուտ մարդկանցով։ Ահա սրանց թվին եր պատկանում նաև Պռոշյանը։ Սրանք աշխատում եյին անձնվիրաբար, չխնայելով յեռանդ և ջանք։ Սրանց շնորհիվ «Մշակ»-ն

սկզբից և յեթ մեծ հաջողություն և ունենում։ «Առանց ինչ ակնկալության, հայ գրականությանը ծառայելու միայն մտքով, ցորեկը նոքա յուրյանց մի կտոր հացի քամակից են վաղում, իսկ գիշերը քունը կտրած մինչև կես գիշեր ևս ավելի պարապում «Մշակ»-ի խմբագրատանը, շատերը մինչև տպարանն են վազում, վորը մուր և քսում, վորը սրբագրությամբ և պարապած և վորը տառեր և ցրվում»։

Գրիգոր Արծրունին սկզբնական շրջանում նրանց նույնիսկ խմբագիրներ ևր համարում և վոչ լոկ խմբագրության անդամներ, իրեն վերապահելով պատասխանատու խմբագրի կոչումը։ «Գիտնական Արծրունին—իրոնիայով գրում և Պռոշյանը—ամոթ չի համարել յեվրոպական հայացքով գրած հոդվածը յենթարկել մի քանի թերուսների քննությանը. նա յուր ձեռքով գրիչը հանձնել և նույն հայագետներին՝ հայացնելու յուր հոդվածը»։

Արծրունին շուտով ամրապնդված տեսնելով իր դիրքը, սկսեց աստիճանաբար հետ խլել իր աշխատակիցների իրավունքները, խեղդել նրանց ձայնը։ Վոգևորությամբ գործին կպած անձնազոհ աշխատակիցների խումբը սկսեց ցրիվ գալ։ Պռոշյանի աշխատակցությունը «Մշակ»-ին շատ կարճ և տևում։ Նա հենց նույն տարին, 1872 թվին, թողեց «Մշակ»-ը։ Հեռացան նաև Զմշկյանը և Ամերիկյանը։ «Հին թերուսներից—գրում և Պռոշյանը,—միայն Ռաֆֆին գլուխը կախ ծանր նըստեց յուր տեղը իբրև վարձկան աշխատակից, վոր վայելեց և անուն ստացավ»։

Հիշյալ ինտելիգենտների հեռանալը «Մշակ»-ից և Արծրունուց պատահական չեր, ինչպես և պատահական

չեր այն հանգամանքը, որ Բաֆֆին համակերպվեց «Մշակ»-ին։ Պռոշյանն իր դեմոկրատական աշխարհայացքով չեր կարող հաշտության չեզր գտնել լիբերալ հրապարակախոսի հետ։ Ասել է թե՝ Պռոշյանի «Մշակ»-ից հեռանալն ուներ իր սոցիալական խորը պատճառը։

*
* *

«Մշակ»-ից հեռանալուց հետո Պռոշյանը զբաղվում է կնոջը բժշկուհի դարձնելու մտքով։ Այս մտադրությունն իրագործելու համար կամենում է անցնել արտասահման, հույսը դրած լուսանկարչության և բաբեկամների ոգնության վրա։ Պռոշյան ամուսինները սկսում են գերմաներեն սովորել, սակայն կառավարության կարգադրությունը՝ հետ կանչել Ցյուրիխից բոլոր ռուս ուսանողուհիներին, հուսախարություն և առաջացնում նրանց մեջ։ Ինչ խոսք, որ նրանց այս մտադրությունը յերբեք չիրագործվեց, բայց յերկար ժամանակ նրանցից չեր հեռանում այդ միտքը։

1874 թվի ամառը Պռոշյանը հրավիրվում է Հաշտարխան։ Այստեղ նա հիմնում է յերկսեռ ծխական դպրոց։ Հաշտարխանում անցկացրած տարիներից նա չափազանց դժգոհ է։ Այստեղ ևս Պռոշյանը չի ազատվում խավարամիտների դավերից և հալածանքներից։ «Պրոտեստանտ», «անաստված», «անբարոյական» բառերով ելին վորակվում այստեղ Շանշյանը և նրա աշակերտները։ Հաշտարխանից Ղ. Աղայանին գրած մի նամակում Պռոշյանը գրում է. «Այստեղ չկա այնպիսի ընկերություն, յեղածները մի քանի յերիտասարդներ են, վորոնց քթի ծայրին վորդը շուքով չի հաս-

նիլ, իրենց համարում են բարձր արիստոկրատ և միմիայն կլուբի հերոսներ»։ «Կլուբի հերոսների» շրջանում Պռոշյանն իրեն զգում է բացարձակապես միայնակ։ Միաժամանակ նա աչք չի բացում ընտանեկան դժբախտություններից։ Նա ձգտում է դուրս պրծնել այդ անտանելի միջավայրից և հարմար առիթի յե սպասում։ 1876 թվին սկսվեց հրապարակվել Աբգար Հովհաննիսյանի «Փորձ»-ը։ Խմբագիրը մի նամակով դիմում է Պռոշյանին, հրավիրելով աշխատակցելու ամսագրին։ Խրախուսված «Փորձ»-ի խմբագրի նամակից, Պռոշյանը Հաշտարխանում սկսում է գրել «Կովածաղիկ»-ը։ 17 տարի գրական աշխարհից հեռացած հեղինակը կրկին վերադառնում է դեպի գրականություն։ 1877 թվին նա թողնում է Հաշտարխանը և տեղափոխվում է Թբիլիսի։ Այդ թվին եկ «Փորձ»-ում լույս է տեսնում «Կովածաղիկ»-ը։ 1879 թվին նույն ամսագրում տպվում է հեղինակի գլուխ գործոց «Հացի խնդիր» վեպը։

«Սոս և Վարդիթեր»-ից հետո Պռոշյանի դիտողության շրջանակներն ավելի ևս ընդարձակվում են, նրա հայացքը յերևույթների վրա ավելի ևս խորանում է, նոր յերևույթներ են դրավում նրա ուշադրությունը. կենցաղային հարցերը մղվում են հետին պլանի վրա և առաջին պլանի վրա յեն քաշվում գյուղական դասակարգերը, նրանց մեջ յեղած փոխհարաբերությունը։ «Սոս և Վարդիթեր» և «Հացի խնդիր» վեպերի մեջ ընկած է մի ամբողջ քսանամյակ։ Սոցիալական շերտավորումը գյուղում արագ թափով առաջ եր գնացել և դասակարգերի մեջ ստեղծվել եր անանցանելի անջրպետ։ Առաջացել եր ցեցերի—գյուղական կյանքի

քայքայիչների մի ահագին բազմություն։ Սրանք պաշտոնամոլ, շահամոլ, կաշառակեր աստիճանավորներն էին, կեղեքիչ վաշխառուները և իր սուր գործունեությամբ առաջիններին գերազանցող հոգևորականությունը։ Սրանք գյուղական աշխատավորության դեմ հանդես են գալիս միասնական ճակատով։ Սրանց մեջ շահերի հակասություն չկա, ընդհակառակը նրանց շահերը խայտաձևվում են։ Անհնարին է պատկերացնել Միկիտան Սաքոյին առանց մովրովի, ինչպես նրա միկիտանխանեն առանց մովրովի ապարանքի։ Իսկ գյուղական քահանան սրանց դավերի մշտական գործակիցն է։

Գ. Գոչյան

Պռոշյանի ստեղծագործության մեջ առանձնահատուկ տեղ ունի «Հայի խնդիր» վեպը։ «Հայի խնդիր»-ը Պռոշյանի գրական հասուն շրջանի արգասիքն է։ Դա մի գործ է, որը բացառիկ արժեք ու նշանակություն ունի ամբողջ հայ վիպագրության մեջ, որպես սոցիալական խոշոր յերկ։ Ավելի քան յերեք հարյուր հիսուն մեծադիր եջերից բաղկացած այդ սավառ գիրքը մի հայելի յե, որն իր մեջ անդրադարձրել է 60—70-ական թվականների Արարատյան դաշտի գյուղերի կյանքը։

Ահավասիկ վեպի բովանդակությունը։

Աշտարակում անվանի հարուստ Խեչանանց Խեչանի միակ ժառանգը նրա աղջիկն եր՝ Հեղնարը, որին հայրը մանկուց նշանել եր Սմբատի հետ։ Հեղնարը չնայած աչքի չեր ընկնում իր գեղեցկությամբ, բայց հարուստ ոժիտի շնորհիվ բազմաթիվ գյուղական յերիտասարդների տենչանքի առարկան եր։ Խեչանի հարբստությանը աչք եր դրել նաև Միկիտան Սաքոն, այս վեպի կենտրոնական անձը։ «Խեչանի աղջիկը չեմ առնում, նրա մալ ու գովլաթը պիտի լինի իմ կնիկը»— ասում եր նա։ Սաքոն մոլրովի (գավառապետի) հետ ունեցած իր բարեկամության ու կապերի շնորհիվ խափանում է Հեղնարի ու Սմբատի պսակը։ Այնուհետև զանազան հնարներով փորձում է գրավել Խեչանի սիրտը, շահել նրա համակրանքը։ բայց Խեչանը լավ եր ճանաչում «սատանա» Սաքոյին և գիտեր այդ բոլորի բուն շարժառիթը։ Սաքոն փորձում է ավազակների միջոցով փախցնել Հեղնարին, սակայն Հերիքնազը (Խեչանի այրիացած քրոջ աղջիկը, որ մոր հետ նրա տանն եր ապրում) ազատում է ավազակներից

մեկին և խանգարում նրանց դիտավորությունը։ Այս դրությունից Սաքոն հաջող յելք է գտնում։ Մարդասպանության մեղադրանքով բանտարկել է տալիս Խեչանին և վերջինիս բարերար ձևանալով, սկսում է քամել նրա հարստությունը։ Գալիս է «արդարադատ» քննիչը և ազատում արդեն գերեզմանի դուռը հասած Խեչանին։ Սաքոն «արդարադատությունից» խուսյս է տալիս, անցնում է Պարսկաստան վորպես պարսիկ կրոնավոր։ Մինչև Խեչանի բանտից դուրս գալը մեռնում է Հեղնարը, մեռնում է և Խեչանը։ Սմբատը ամուսնանում է Հերիքնազի հետ և տեր է դառնում Խեչանի ժառանգությանը։

Վեպի մեջ բոլոր գործողությունների հիմնական առանցքը Սաքոն է, բոլոր գործողությունները նրա շուրջն են դառնում, նրանից են սկսվում և նրա վրա հանգչում բոլոր դեպքերն ու անցքերը։

Միկիտան Սաքոն առևտրա-վաշխառուական դասակարգի տիպական ներկայացուցիչն է։ Նա լավ է հասկացել կապիտալիստական հասարակության գայլի որենքը և ինքն էլ զինվել է գիշատիչի ժանիքներով։ Նրա մանկությունը անց է կացել իր պես գող ու խարբերա գինեվաճառների գինետներում։ Սաքոն աշակերտելով նրանց, գերազանցել է իր ուսուցիչներին իր ճարպիկ խարբերայությամբ։ Ամենուրեք իր շահը հետապնդող, աշխատավորներին հարստահարող Միկի ոան Սաքոն նրանց ցավակից և բարեկամ է ձևանում։ Փող դիզելու տենչը սրա մոտ բնավորություն է դարձել, այդ մի կիրք է, վորի մեջ լուծվում, կորչում են մնացած բոլոր ձգտումները։ Նրա համար չկան բարոյական նորմաներ, վերացել են թույլատրելի և անթույլ-

լաբրելի սահմանները. ամեն ինչ լավ է, յեթե նպաստում է փող դիզելուն։ Փողը նրա կյանքի նպատակն է և բոլոր գործողությունների առանցքը։ Վորպես կապիտալիզմի ներկայացուցիչ նա լավ գիտե փողի ուժը։ Փողն ամեն ինչ է, նա կուռք է, պաշտամունք, աստված։ Յեվ այդ ամենահզոր ուժին տիրանալու համար Սաքոն միջոցների մեջ խտրություն չի դնում. «Նպատակը արդարացնում է միջոցը»։ Ստոր դավեր և խարդախ մեքենայություններ հորինելու մեջ Սաքոն անգերազանց է։

Բնատնտեսության շրջանում արհամարհված փողը այստեղ չտեսնված ուժ և իշխանություն է ստացել և այդ իշխանությունը լծի պես ծանրացել է աշխատավորության վրին։ Արհամարհված փողատերը Պոռշյանի գյուղում կենտրոնական դեմք է վեպում՝ գլխավոր գործող անձ։

Աշխատավոր գյուղացին մինչև կոկորդը խրված եր պարտքի մեջ։ Մի անգամ վաշխառուի ճանկն ընկնողը այլևս փրկություն չունի։ Պարտքը ժառանգաբար անցնում է հորից վորդիներին։ Հորը խեղդող ողակը խեղդում է նաև զավակներին։ «Առաջ ով վոր մի թուման պարտք եր ունենում, քունը չեր տանում ընչանք մի յեղը, յա մի կովը չեր ծախում, իր հոգին թափում. հիմի գիտես քանի թումաններ են անտեր սանադի մեջ դրվում։ Ի՞նչ յեղը, ի՞նչ տուն ու տեղ, ի՞նչ մուլք, վորդին ել վոր ծախի, պրծնում չկա. ըսկի չգիտեմ, թե սրա վերջը ուր պիտի հասնի»...

Ինչպես վերը ասացինք, անհնարին և պատկերացնել Միկիտան Սաքոյին առանց մովրովի։ Սաքոն գործում եր մովրովի գիտությամբ և աջակցությամբ։

Կապը գավառապետի հետ ավելի մեծ ուժ և համաձակություն է տալիս նրա գործունեությանը։ Զարմանալի սուր դիտողություն է հանդես բերել Պռոշյանը այս դեպքում ևս։ Նա ցույց է տվել այդ կապի վոչ պատահական, այլ դասակարգային բնույթը։

Մովրովը տիպիկ ներկայացուցիչն է ցարական ատիճանավորության։ Նա իր պաշտոնի վրա նայում է իբրև չեկամտի անսպառ աղբյուրի։ Կաշառակերությունը նրա մոտ բնավորության գիծ է։ Նրա պաշտպանությունից ոգտվում են նույնիսկ ավազակները։ Ժողովրդին հարստահարելու համար Սաքոյի հնարած բոլոր մեքենայություններին մովրովը որենքի ուժ է տալիս։ Որենքն ու իշխանությունը մովրովի սեփական շահերին ու բարեկեցությանն են ծառայում։ Իր շահերից դուրս չկա վոչ որենք, վոչ իշխանություն։ Իշխանությունը մովրովի ձեռքին մսագործի դանակ է, վորով նա մաշկում է ժողովրդին։ Նա իր բոլոր ապորեն արարքների համար բարձր իշխանության կողմից մնում է անպատիժ։ Իր կողոպուտից առատ բաժին է հանում մեծավորներին, դրանով ավելի ամրապնդելով իր դիրքը։ Այսպիսով Պռոշյանը մերկացնում է ցարական պետական սիստեմի ամենագաղրելի կողմերից մեկը—վարից վեր կաշառքով դիրք ամրապնդելը և բարձր պաշտոնների հասնելը։

Վաշխառուներից կեղեքվող գյուղը մյուս կողմից կողոպտվում է իշխանության ներկայացուցիչների ձեռքով։ Գյուղացու վողնաշարը ծռվում է հարկերի ծանրությունից։ Կոռ ու բեգյարը կրկնակի սոսկալի յեն դառնում մանավանդ մովրովի, յասավուլի, տա-

նուտերի որինաղանցությունների շնորհիվ։ Նրանք ավելի հանդուգն են դառնում շնորհիվ այն բանի, որ գյուղացին տգետ է, որենքից բան չի հասկանում։ Գյուղացին ստիպված է լինում ամեն քայլափոխին իր քսակի բերանը բաց անել։ Նրան սովորեցրել են յերբեք առանց կաշառքի կամ «նվերի» ատիճանավորի դուռը չգնալ, իսկ գյուղացին հաճախ է գնում որենքի դուռը, հաճախ է պատահում կառավարության պաշտոնյային։ «Խալխումն ել հալ չմնաց, յեղը վեր են կացնում, տակիցը հորթը ուզում, զոռով մարդկանց կռվացնում են, վոր մեջտեղը իրենք մոծակի պես ծծեն, արնաքամ անեն. ել վոչ դիվան կա, վոչ դատաստան, վոչ իրավունք կա, վոչ արդարություն. վերջին մեհտարիցը բռնած ընչանք ինքը մոլրովը՝ ձեռը դեմ արած ուզում են։ Ախր վորտեղից տան, մի մեր գեղի հալը հարցրու՝ կսարսափես, վոր լսես. տուն կա, վոր պարտքի տակին թաղված չլինի. ինչ են ուտում. կերածները, պաս որը ցամաք հաց ա, ուտիսին մի կտոր աղվեսի չոր պանիր, հագածներն ել վոր մի թել քաշես ինքը հարյուր կարկատան վեր կընկնի. ախր թե վոր ես կոռ ու բեգյառը չլինի, ընչի համար պիտի պարտքի տակ ճզմվի»։ («Հայի խնդիր»)։

Ցարական պաշտոնեության համար գյուղը ավարառության վայր եր, սա մի տեսակ գաղութային թալանի շրջան եր հայ գյուղի կյանքում։

Պաշտոնյան գյուղացու հոգեառ հրեշտակն է, նրա սոսկ յերևալը ահ ու սարսափ է ազդում գյուղացուն։ Գյուղացու աչքը վախեցել է, նա յերբեք լավ բան չի տեսել պաշտոնյայից և վոչինչ լավ բան չի սպասում։ Բոլոր դեպքերում վոտնահարվում են աշխատավորի

մարդկային տարրական իրավունքները. գյուղացին պաշտոնյայի կարծիքով մարդ չէ։ Նրան ռոզդի տալն աստիճանավորի համար նույնն է, ինչ լծկան անասունին ծեծելը։ Գյուղացու մերկ թիկունքը հաճախ է կապտում յասավուլի մտրակից։

«Արյունը վազելով ցած իջավ գյուղացու յերեսով և նա գլխիվայր գետնին պառկեց։

—Թեկուզ քոռանաս էլ՝ հոգս չի, թե դու սատկած՝ թե մի շուն՝ զուլուղի մարդի համար մին ա, յերկու աքացի էլ գլխին իջեցնելով՝ բաց թողեց յասավուլն ընկած մարդուն»... («Հացի խնդիր»)։

Ալպիսին և Պոռշյանի նկարագրած գյուղի պատկերը ընդհանուր գծերով։ Հարստահարվող, բռնադատվող, որենքից անտեղյակ, իրավազուրկ, իշխողների քմահաճույքին մատնված գյուղացու կյանքից ցնցող պատկերներ և ստեղծել Պոռշյանն իր վեպում։ Նրա ստեղծած վաշխառուների և այլ կարգի հարստահարիչների տիպերն անկրկնելի յեն։ Միկիտան Սաքոն, Բալասան աղան, Բղդեն 19-րդ դարի առաջին կեսի մեր իրականության արյունարբու շայլոկներն են, վորոնք հասարակ անուններ են դարձել։

Ցոսկալի չափերի հասնող ճնշումը և հարստահարությունը բնականորեն առաջացնում են ընդդիմադրության փորձեր. դրանք դեռևս թույլ են, աննշան, ավելի բնազդական բնույթ ունեն, քան գիտակցական, բայց և այնպես կան և ապացույց են դասակարգային պայքարի առկայության։ Զգացվում է գյուղական աշխատավոր մասսայի ընդհանուր դժգոհությունը տիրող դրությունից, նրա խուլ, զսպված զայրույթը, նրա բողոքի ձայնը տիրողների դեմ։ Գյուղական մասսայի

մեջ կան որենքին տեղյակ, հասարակության շահերին նվիրված հատ ու կենտ մարդիկ, որոնք քննադատում են, բողոքում, ընդդիմադրության փորձեր անում, դրդում գյուղացիներին կոլեկտիվ պայքարի։ Պռոշյանը կոչ է անում գյուղացիներից մեկի բերանով «միմյանց քոմակ անել, մի խոսքի լինել»։ Գյուղի չքավորության շահերի պաշտպան է հանդիսանում Յաքուլը, որին վիպասանն ճշմարտախոս ածականն է տալիս։ «Յես տեսնում եմ, որ աղքատը շատ ա զընվում»—բողոքում է Յաքուլը ընդդեմ տանուտերի։ «Աստված էլ գիտի,—ասում է նա,—որ յես իմ քեֆի գարդը չեմ, վոնց որ ըլի մեր ջուրը ջրամանիցը կըհանենք, խոսքս աղքատ անճարների համար ա, որ թոնդիրն ածես՝ շորահոտ չի վեր ըլիլ ու դուք խղճմտանքներիդ դուռը պինդ կողպած եղուց գլխներին սև պիտի բերեք»։ Սա անկյուններում արվող սովորական տրտունջ չէ, այլ բացահայտ պայքար։

Գյուղը ազնիվ աշխատավորների մի համայնք է, ուր յեթե չլինեին ցեցերը, կիշխեր բարեկեցիկ ու յերջանիկ կյանք։ Ցեցերը խլում են արդար վաստակով ձեռք բերած աշխատավորի հացը, զրկում նրան բարեկեցիկ ու յերջանիկ կյանքից։ Այս է Պռոշյանի յեզրակացությունը իր նկարագրած գյուղական իրականությունից։ Նա հեռու յե հոռետեսությունից։ Ժողովրդի յերջանկության հույսը նա ճիշտ կերպով կապում է բոլոր տեսակի շահագործողների և շահագործման վոչնչացման հետ։

*
* *

1879 թվին Պռոշյանը ծանր հիվանդանում է, վորից հետո ստիպված է լինում թողնել Թբիլիսին։ Հքավեր-

վում է Էջմիածին և նշանակվում Երևանի թեմի և Ղարսի վիճակի թեմական տեսուչ։ Պռոշյանի տեսչության շրջանում բացվում են բազմաթիվ գյուղական ծխական դպրոցներ։ Նրա որոք այդ դպրոցների թիվը հասնում է հարյուր հիսուն յոթի։ Աշխատանքի թափառական բնույթը նորից նրան զրկում է ամբողջությամբ գրականությանը նվիրվելու հնարավորությունից, բայց և այնպես այս տարիներին նա գրում է «Շահեն» պատմական վեպը, որը լույս է տեսնում «Փորձ»-ում, 1881 թվին։ Թեմական տեսչի պաշտոնում Պռոշյանը մնում է մինչև հայկական դրպրոցների առաջին փակումը՝ 1885 թվը։ 1885-ից մինչև 1887 թվը Պռոշյանն ապրում է ամենաթշվառ կացության մեջ։ Սովամահությունից խուսափելու համար ստիպված է լինում Երևանում առժամանակ ածխավաճառությամբ պարապել։ Վերջապես 1887 թվին հայոց լեզվի ուսուցչի պաշտոնով նա հրավիրվում է Ներսիսյան դպրոցը և այնուհետև ընդմիշտ հաստատվում Թբիլիսիում։

Չպիտի կարծել, որ Պռոշյանի կրած հալածանքները, տառապանքները և պատառ հացի ամենորյա հոգսը վերջանում են Թբիլիսի հաստատվելուց հետո։ Ամենևին ոչ։ Դեմոկրատ վիպասանը իր կյանքի ամբողջ ուղին տառապանքով է անցել։ Երբեք նա հալածանքից աչք չի բացել ու հացի խնդիրը միշտ եղել է պես ծանրացած է յեղել նրա վզին։ Նա ստիպված է յեղել ամենորյա հոգնեցնող, բթացնող մանկավարժական ծանր աշխատանքից հետո միայն ձեռքը գրիչ առնել և ստեղծագործել։ «Այսոր յես գրում եմ որաական հինգ դաս տալուց և շաբաթական հարյուր հի-

սուն—յոթանասուն շարադրություններ տանն ուղղելուց հետո, եվ ինչ ուժ և հոգեկան զորություն է մընում իմ մեջ գրականությանը նվիրվելու գործում ըստ պատշաճին փայլելու»։

Ղ. Աղայանը 1889 թվին «Աղբյուր»-ում հարուցելով Պռոշյանի 30-ամյա հոբելյանի հարցը գրում է. «Նա տկարությանը չնայած, իր բազմաթիվ գերդաստանը պահելու համար հարկադրված է Ներսիսյան դպրոցում վարժապետության պաշտոն կատարել, որպեսզի շտապեցնե մեր ամենիս չցանկալի մահը։ Մեզանից ավելի մի խելացի ժողովուրդ կապահովեր նրան մի թեթև, որպեսզի իր կյանքի մնացորդը բացառապես գրականությանը նվիրե, ճոխացնե մեր աղքատիկ գրականությունը իր արագաշարժ և աշխույժ գրչով, թողնելով վարժապետությունը նրանց, որոնք լավ վարժապետ լինել կարող են, առանց կարողանալու տալ մեզ մի յերես Պռոշյանցի գրվածից»։ Բայց Պռոշյանին վիճակված չեր այդպես «վաղ» աղատվել տնտեսական հոգսից և ամբողջությամբ գրականությանը նվիրվել։

1889 թվին «Նոր-Դար»-ը և «Աղբյուր»-ը հրապարակ են հանում Պռոշյանի գրական գործունեության 30-ամյա հոբելյանի խնդիրը, արձագանքում և այդ հարցին նաև «Մուրճ»-ը։ Սակայն Արծրունին և Արգար Հովհաննիսյանը «Ցեցեր» վեպի կապակցությամբ Պռոշյանի դեմ կատաղի հալածանք են սկսում, անարգանքի չլսված խոսքեր ուղղելով հեղինակի հասցեին, հայտարարելով նրա յերկերը զուրկ գեղարվեստական արժեքից։ Պռոշյանի հոբելյանն, այսպիսով խափանվում է։ Շուտով հրապարակ և հանվում Արծրունու

հոբելյանը։ Արգար Հովհաննիսյանը փորձում է այս ևս խափանել, և այդ նպատակին հասնելու համար գործիք է դարձնում Զմշկյանին, փորձելով Պռոշյանին ևս խառնել իր կեղտոտ գործին։ Պռոշյանը հրաժարվում է իր մաքուր ձեռքերը ապականել հայ լիբերալ հրապարակախոսների անմաքուր հաշիվներում։ Արգար Հովհաննիսյանը հարկադրանքի ամենախայտառակ միջոցներին է դիմում։ Նա Ներսիսյան դպրոցի հոգաբարձուն եր. սպառնում է Պռոշյանին պաշտոնից ազատել, յեթե վերջինս Արծրունու դեմ զրպարտիչ հոդվածներ չգրի։ Սպառնում է «Արձագանք»-ում նրա հասցեին վարկաբեկիչ հոդվածներ գրել։ Պռոշյանին ուղղած 1890 թվի ապրիլի 27-ի նամակում Արգար Հովհաննիսյանը գրում է. «Յես համոզված եմ, վոր պատվի մասին ձեր հայացքներն ունեցող մարդը, անկարող է դաստիարակի պաշտոն վարել վորևե ուսումնարանական հաստատության մեջ։ Յես համոզված եմ, վոր պատվի մասին ձեր գաղափարներն ունեցող վիպասանը իր ժամանակակիցների կողմից չպետք է մեծարանաց արժանանա, վորքան և տաղանդավոր մատենագիր լիներ նա»։ Բերելով այս նամակն իր հիշատակարանում, Պռոշյանը դառնությամբ ավելացնում է. «Հե՛յ անտեր մնաս, հայի խնդիր, ստիպված եմ հրատարակության չտալ Արգարի արարքը, հարկադրված եմ արտասուքս կուլ տալով բավականանալ հիշատակարանիս թերթերը մրոտելով, մի գուցե առավել գըրգռեմ Արգարին և նրա շնորհիվ ապրուստի միջոցից զրկվեմ»։ Այդ հալածանքները Պռոշյանի դեմ Հովհաննիսյանը շարունակում է նաև 1892 թվին։ «Արձագանք»-ում ծաղրում է Պռոշյանի դասավանդությու-

նը, «վոր մի որ, ինչպես հոդաբարձու, կարողանա առաջարկել իմ արձակման հարցը, ինչպես արեց յերկու տարի առաջ»։ Նշավակության հետևյալ խոսքերով ե յեզրափակում Պռոշյանը իր խոսքը. «Ամոթ Արգարին և Արծրունուն, ամոթ մեր հրապարակախոսներին. իրենց բոլոր գործողության եյական կետն անձնական շահն ու յեսն են արել»։

Լիբերալ ինտելիգենտներն անվերջ դառնացրել ու թունավորել են դեմոկրատ վիպասանի կյանքը, սակայն այդ հալածանքներն անզոր յեղան հեղինակի մեջ մեռցնելու գրականության համար աշխատավորությանը ծառայելու մեծ ձգտումը, մի ձգտում, վորով առաջնորդվել ե նա իր գրական գործունեության ամբողջ ընթացքում։

Վիպասանի սիրած վայրը Պռոշյանների այգում։

1883 թվին սկսվում է հրատարակվել Արասխանյանի «Մուրճ»-ը։ Պռոշյանը հրավիրվում է աշխատակցելու ամսագրին։ Այս շրջանում են գրված նրա մի քանի նշանավոր վեպերը՝ «Ցեցեր» (1889 թ.), «Բղդե», (1890 թ.), «Սկիզբն յերկանց» (1892 թ.)։ Առաջին յերկուսը տպվել են «Մուրճ»-ում։

«Ցեցեր»-ը գրված է «Հացի խնդիր» վեպից տասը տարի հետո։ Այդ շրջանի գործերի մեջ դա լավագույնն է և արժանի առանձին ուշադրության։ «Ցեցեր»-ը ժամանակին յենթարկվել է լիբերալ մամուլի խիստ հարձակումներին։ «Մշակ» լրագիրը իր պաշտպանության տակ առնելով ժողովրդի արնախում տգրուկներին՝ գնթունիներին, Բալասան աղաներին՝ հայհոյանքի և լուտանքի խստագույն խոսքեր է ուղղել Պռոշյանի հասցեին, անվանել է նրան «բուռ», վեպը պասկվիլ, «վեպ» գոյականը առնելով չակերտների մեջ։ Նույն բացասական վերաբերմունքին է արժանացել «Ցեցերը» նաև «Արձագանք»-ի կողմից։

Զափաղանց խոշոր է «Ցեցեր» վեպի դերը իր հասարակական արժեքով և սոցիալական հագեցվածությամբ։ Վեպի այս կողմն է, որը կծու յե թվացել լիբերալ քննադատների քիմքին։

Ահա նրա համառոտ բովանդակությունը.

Ռ. գյուղի իգիթ յերիտասարդներից մեկը, Պետրոսենց Սամսոնը, սիրում է Ալեքենց Բարսեղի աղջկան՝ Սոնային և փոխադարձաբար սիրվում նրանից։ Նրանց այգիները կից են, դրա շնորհիվ նրանք հաճախակի գաղտնի տեսակցություններ են ունենում։ Սոնան իր հոր յերեք այգիների և ընտիր հողերի միակ ժառանգն է։ Նա միաժամանակ աչքի յե ընկնում իր ար-

տակարգ գեղեցկութեամբ։ Սիրահարների ծնողները համակրում են նրանց զգացմունքները և պատրաստ են շուտով ցանկալի բարեկամություն հաստատել յերկու ընտանիքների միջև։ Սիրո, բարեկամության և փոխադարձ համակրանքի այդ մթնոլորտում հանկարծ հայտնվում է Խուդոն՝ գյուղի տանուտերը, չարությամբ և անաղնիվ հակումներով լեցուն։ Շլացած Ալեքենց Բարսեղի այգիներով, վոտնահարելով բարեկամության—չհասության որենք, Խուդոն կամենում է Սոնային ամուսնացնել իր վորդու հետ և տեր դառնալ Բարսեղի սեփականությանը։ Խուդոյին ամենևին չի հետաքրքրում Սոնայի, նմանապես և իր վորդու զգացմունքները։ Խուդոն Սոնային նույնիսկ յերբեք չի տեսել և այդ նրա փույթը չե։ «Քո մեղաց պարտական ըլիմ, թե աչքս աչքին առած ըլնի, կամ Կարոյի մտքովն անցկացած ըլնի. մլքերի համար եմ ուզում», ասում է Խուդոն Բալասան աղին։

—Ասում են աչքի մեկը կույր է, տնաքանդ,—հեգնեց Բալասան աղան։

—Տո, թող քաչալ ել ըլնի. իր բաղերի թփերը կքաղենք՝ գլուխը կծածկենք, իր հավոդի պտղները աչք կդնենք։

Խուդոն ունենալով իրեն աջակիցներ Բալասան աղին, Գնթունուն և Տեր-Սուքիասին, Սոնայի և Սամսոնի նշանը խափանում է և մարդասպանության սուտ մեղադրանքով վերջինիս բանտ նստեցնում։ Բայց մի անակնկալ դեպք գործի ընթացքը միանգամայն փոխում է։ Գտնվում է Գնթունու հիշատակարանի թերթերը, վորոնցով Բալասան աղի և նրա գործակալների բոլոր մութ գործերը լույս աշխարհ են հանվում։

Գնթունին բանտարկվում է և բանտից փախչում Վան, Խուդոն զրկվում է տանուտերությունից և ակամա հրաժարվում իր ստոր մոտադրությունից. Սամսոնը և Սոնան ամուսնանում են։

Այս դեպքերի ֆոնի վրա իրենց քայքայիչ, ավերիչ գործունեությամբ հանդես են գալիս գյուղի ցեցերը՝ Բալասան աղան, Գնթունին, Խուդոն և Տեր-Սուքիասը։

Բալասան աղան ավանտյուրիստ Միկիտան Սաքոյի և ասեղ ու թել ծախող մանր չարչի Բղդեյի համեմատությամբ կապիտալիստական հարաբերությունների զարգացման ավելի բարձր ետապի ներկայացուցիչն է։ Նա խոշոր վաշխառու է, գործունեության լայն շրջանակով։ Բալասան աղան իր բուի մեջ և սեղմել մի ամբողջ գավառ։ Նա միաժամանակ բարձր աստիճանավոր է։ Բալասան աղան Սաքոյի և մովրովի սինթեզն է։ Փող դիզելու տենչի հետ մեկտեղ, նա ունի իշխանության և աստիճանի ձգտում, վորին հասել է ստորաքարշությամբ, մեծավորների վոտքերի առջև սողալով։ Ո. գյուղացի քաչալ Մեսրոպի տղա Բալոն դառել է Բալասան աղա՝ նույն գյուղի ահն ու սարսափը։ Ամենաստոր ճանապարհներով նա հասել է հասարակական սանդուխքի բարձր աստիճանին։ Փողի և պաշտոնի ուժով նա ստրկական հնազանդության մեջ է պահում գյուղի հասարակությանը։ Մի գյուղացի այսպես է պատճառաբանում հասարակության հնազանդությունը Բալասան աղի հանդեպ. «Մարդս հինգտաս շահի յենք պարտք առել՝ ճուտեր ա հանել, մեր վրա պառկել, տակից դուրս չենք կարող գալ, մեղա-

վոր սևերեսի պես լեղուներս կարճ ա, առաջին գլուխներս ծռում ենք, եղուց, ելոր ունեցածներս տոլկի (աճուրդ) կկապի կծախի...»։ Փողն ու իշխանությունը նրան դարձրել են զոռող, ամբարտավան, իշխանասեր և անհանդուրժող։

Բալասան աղան տասնյակ ու հարյուրավոր թելերով կապված է գյուղերի հետ։ Ունի իր գործակալները գյուղական ազգաբնակության մեջ, վորոնք դավաճանում են համայնքին ի նպաստ աղայի շահերի, ակնկալելով միաժամանակ իրենց անձնական շահը։ Տանուտեր Խուդոն այդպիսի հարաբերության մեջ է Բալասան աղայի հետ։ «Հիմի դու ինձ գլաքի շինի, տես վոնց եմ տարին չբոլորած շիշկական մանեթները առաջիդ կիտում, տես հինգ տաս մանեթով վոնց եմ քեզ հազարներ ածող բաղերի ու մինի հարիր արդում (արդյունք) տվող հողերի տեր շինում», խոստանում է Խուդոն Բալասան աղին։ Բալասան աղեն հաճախ միջամտում է գյուղական համայնքի գործերին։ Գործ դնելով իր ուժն ու ազդեցությունը՝ գյուղական գործերում առաջ է քաշում իր շահերին նվիրված մարդկանց։ Այսպես, համայնքի կամքին հակառակ նա Խուդոյին տանուտեր է դարձնում։ «Իստակ յերեխանց տակի փալասն ել դուրս կքաշի»,—ասում են գյուղացիք նրա մասին։

Տաճատ Գնթունին մի կատարյալ ավանտյուրիստ է, Միկիտան Սաքոյի պատճենը։ Նա Վարագա վանքում յեղել է Խրիմյանի աշակերտը և այնտեղ սովորել է ձեռագրեր կեղծել։ Այդ «արհեստը» նա դարձրել է ժողովրդին կեղեքելու միջոց։ Գնթունին կեղծ մուր-

հակներ է կազմում, ստորագրություններ է կեղծում և ուրիշ շատ խարդախություններ կատարում։ Բալասան աղի բոլոր մեքենայությունները նրա ձեռքով են անցնում։ Գնթունին դատարանի գրագիրն է և գյուղի վարժապետը։ Միաժամանակ նա պարապում է վաշխառությամբ, հարստահարելով թուրք և հայ աշխատավորությանը։

Պռոշյանն ստեղծելով Գնթունու տիպը, ջարդ ու փշուր է արել ուռեցրած այն հմայքն ու մեծարանքը, որ լիբերալներն ստեղծել էին Խրիմյան «Հայրիկի» և Վարագա դպրոցի շուրջը։ Այս հանգամանքն էր, որ այնպես կատաղեցրեց Պռոշյանի լիբերալ քննադատներին, որոնք փրփուրը բերաններին չլված խոսքեր շպրտեցին «Ցեցեր» վեպի և նրա հեղինակի հասցեյին։

Տանուտեր Խուդոն, Բալասան աղեն և Տաճատ Գնթունին միասին սուրբ յերրորդության նման մի բան են կազմում։ Տանուտեր Խուդոյի մասին ժողովրդական առածն ասում է. «Գողը տանից լինի, յեղը յերդիկից կհանեն»։ Դուրս գալով բուն ժողովրդից, դավաճանում է նրա շահերին, ոգնում ժողովրդի թշնամիներին, նրա հարստահարիչներին։ Խուդոն հետապնդում է միայն իր անձնական շահը։ Հարստանալու, դիրք ստեղծելու, ժողովրդի վրա իշխանություն ձեռք բերելու ձգտումով են պայմանավորված Խուդոյի բոլոր գործողությունները։ Նա քսու յե և ստորաքարշ։ Բալասան աղի գարշապարը լիզելով, նրա քմահաճույքին ծառայելով, ոգտվում է նրա հովանավորությունից՝ աստիճան ու դիրք ձեռք բերելու համար։ Խու-

գոն վորպես իշխանավոր բիրտ ե, վայրենի ու կաշառակեր։

Տեր-Սուքիասը Պռոշյանի ընորոշումով Միկիտան Սաքոյի յերկվորյակն ե՝ նրա հետ մի հորից և մի մորից ծնված։ Նա գյուղական քահանայի սովորական տիպ ե։ Տեր-Սուքիասները չեն ծառայում վորևե սկզբունքի, նրանց դավանանքը սովական դրպանն ե և ստամոքսը։

Սրանք են գյուղի քայքայիչները, վորոնց մի ընդհանուր անունով Պռոշյանը ցեցեր ե անվանում։

«Ցեցեր»-ում նույնպես գյուղական աղգաբնակությունը բողոքում ե, տրտնջում իր վիճակից։ Պարտքի տակ ճղմված պարտատիրոջ ցանցում խճճված գյուղացին յերբեմն համարձակություն ե ունենում բողոքելու նրա անարդարացի պահանջի դեմ, թեկուզ և այդ իրեն շատ թանգ ե նստում։ Գյուղացի Սարոն Բալասան աղին հետևյալ խոսքերն ե ուղղում, կամենալով արդարացնել պարտքը ժամանակին չտվող գյուղացիներին։ «...գարունքը գալիս ա մատներիս միան ուտում ենք, գիշեր-ցերեկ շան նման տանջվում ենք... Եվի երեխեքը տկլոր, եվի մի կտոր ցամաք հացի կարոտ. ոնր ա գնում. իհարկե քո հրամանոց քիսան ա մտնում. գլուխս քարովը տվի, քեզանից հարյուր հիսուն մանեթ վեր կալա. ես ա հինգ տարի յա, հինգ ենքան տվել եմ, դեռ հինգ հարյուր եվ կա. եվ ինչ ես ուզում. խալխը գնում են բաղ են տնկում, հողագործության մեջ կյանք ու արև են մաշում, տավար, վոչխար պահում, արևի տակին, սարի թմբին, գող ավազակի, գել ու գազանի հետ են կռվում, թե ինչ ա մի կտոր ցամաք հաց գտնեն իրենց յերեխեքանց համար.

դու ամառը յայլանների հովումը, ձմեռը գոգոան բուխարու կողքին՝ փափուկ բարձի վրա թինկ ես տալիս, ել գյուղացու վրա միտք ել չես ցավացնում, հիմի ել յեկել ես յերկու վոտներս մի մաշիկի դնում, բողաղներիս չոքել ես, թե՝ ավեք. հեր որհնած, մեզնից ել լավ կթի կովեր, վոչխար չենք բաս ինչ աստծու կրակն ենք։ Բրդներս խուզի, մլքիդ յեկամուտը անհնձել տուն ածա, պատրաստ բրդած կերակրի գլխին նստի ու աստծուն փառք տուր»։ Գեղը կանգնի գերան կկոտրի—ասում է մի այլ գյուղացի, հորդորելով համագյուղացիներին դեմ քվեարկել Բալասան աղի առաջադրած տանուտիրական թեկնածությանը։ Նույն վեպում Սիսակը համառ ու անհաշտ կռիվ է մղում Բալասան աղի ու նրա արբանյակների դեմ, մերկացնելով նրանց մեքենայությունները։ Սիսակը գյուղի շահերին նվիրված մի կրթված յերիտասարդ է։ Սա ինտելիգենցիայի այն խավի ներկայացուցիչն է, վորի սրտին մոտ է ժողովրդի շահը—նրա բարեկեցության, յերջանկության ձգտումը։

Պռոշյանի վերջին նշանավոր գործը «Հունոն» է, վորը նույնպես տպագրվել է «Մուրճ»-ում (1900 թ.)։ Զավդանց ուշագրավ է Պռոշյանի ստեղծագործության վերջին շրջանի այս վեպը, սրա հետ մեկ տեղ նաև «Մեր Խեչոն» պատմվածքը։ Հունոն և Խեչոն Պռոշյանի կողմից իդեալականացված ավազակներ են։ «Հարամակերների մսակեր Հունոն» ավազակ չե սովորական իմաստով. նա հալածվում է ցարական իշխանությունից, վորովհետև հանդգնել է պատժել զորքայի անիրավացի արարքը, պաշտպանել իր սերը, իր պատիվը։ Գյոգչեցի անվանի հարուստ Մելիք Մրտոյի

տղա Զաքոն չի ճանաչել աղքատ Հունոյի իրավունքը սիրո խնդրում, նա փորձել է հարկադրաբար Հունոյին հեռացնել չքնաղ Կյուլոյից և բռնությամբ տիրանալ վերջինիս։ Հունոն չհանդուրժելով անսանձ հարստի անիրավությունը սպանել է նրան, հափշտակել սիրածին, հանձնել մոր խնամքին ու ինքն այնուհետև ավազակ է դառել։ Իր մասին Հունոն ասում է.

«Ցեղս կողոպտում, սպանում եմ խեղճ գյուղացու քրտինքը լափողներին, անտեր անտիրական վորբերին քերթողին, շահին շահ առնողներին, գողին, ավազակին, աղամորդու հայտնի ու թագուն թշնամիներին, խարերաներին, նրանց, վորոնց տունը բերնե բերան լիքն է ու մի հատ փող, մի հատիկ ցորեն իրենց աշխատանքով չի ներս յեկել, ատծու ստեղծած անբաղդների դառն աշխատանքի պտուղներն են»։

Այսպիսով Հունոն իրեն պարզ հաշիվ է տալիս իր արարքի համար. նա ըմբռնում է իր «ավազակության» սոցիալական բովանդակությունը։

«Մեր Խեչոն» պատմվածքում վիպասանը գրում է.

«Վորտեղ աղքատի բերանից պատառ խլող, շահին շահ առնող, ժլատ հայ ու թուրք կային. ինչ տեղ իրենց ռահաթին ղրկող, նեղացնող կալվածատերեր կային, ինչ տեղ հոգիք գաղի ծերին չափող բազաղներ, կշեռքում հարամություն անող հացածախներ կային, կյանքները լորի պոչի պես կարճանում եր, դժոխքի բաժին եյին լինում։ Մեր Խեչոն իր ձեռքով եր եդպիսիներին գնդակախորով անում, կամ վզները կարմիր թել կապում (մորթել»)։

Հունոն և Խեչոն զենքը ձեռքներին պաշտպանում

են հավասարապես թուրք ու հայ աշխատավորներին, դրա համար նրանք սիրված են ժողովրդից։ Իշխանությունից հալածված Հունոն ապաստան է գտնում աշխատավոր ժողովրդի մոտ։ «Վոչ միայն հայ գյուղերումն Հունոն ամենքի գլխի վրա տեղ ունի,—ասում է նրա մասին մի աշխատավոր գյուղացի,—այլև նույնիսկ աշխատասեր թուրք գյուղերում... Ցես խոսում եմ վիզն արևառ, հողագործ, դառն քրտինքով իր ցամաք հացը ճարող թուրքերի մասին»։

Հունոն ու Խեչոն տարբեր ազգությունների աշխատավորության կողմից ճանաչված ու սիրված, նրանց շահերին նվիրված մարդիկ են։ Նրանք ժողովրդի բարեկամներն են, իսկ հարստահարիչների արնախում թշնամիները։ Ցարական իշխանության կողմից տաժանակիր աշխատանքի դատապարտված Հունոյի մասին հեղինակն ասում է. «Ի ցավ Գեղարքունի գավառի թուրք ու հայ ճնշված ու հարստահարված դասակարգի, Սիբիրի ճանապարհն է բռնել»։

Վեպը կառուցված է սոցիալական հաստատուն բազայի վրա։ Հունոյի պայքարը, դա հարստահարվողների պայքարն է իրենց հարստահարիչների դեմ, դա աղնիվ աշխատավորի բողոքն է բիրտ ու յեսամոլ հարուստների դեմ։ Վեպի հերոսը դասակարգային գիտակցության յեկող գյուղի աշխատավորության տիպական ներկայացուցիչն է։ Հունոն իր հայրենի լեռներից ձեռք է պարզում քաղաքի աշխատավորության շահերին պաշտպան Պեպոյին ու նրա հետ մեկտեղ բողոքում իշխողների ու շահագործողների բռնության դեմ։

«Աշխարքումս ոչ է տվել արդարություն, գութ,

խղճմտանք,—ասում է Հունոն իր մենախոսության մեջ—աշխարքումս արդարն ու լավը նա է, որ քսակումը վոսկիք, ձեռքին իրավունք ունի, արդարը, լավ անունի տերն ու բարերարը նա է, որ իրենից անզորին, իրենից խեղճին մրջյունի պես վոտքի տակը կըքցի, կըճխլի, ճխլիկը կհանի ու գլուխը բարձր բըռնած՝ իր արածով կպարծենա, աշխարհքը նրա գովքը կանի, նրա առաջին խունկ կծխի»։

Ժողովրդի մարդիկ, նրա շահերի արտահայտիչները թեկուզ թույլ են պատկերված, հաճախ ստվերի պես հայտնվում է չքանում են, թեկուզ հետևողական չեն իրենց պայքարի մեջ (Հունոն վերջիվերջո հանձնվում է իշխանությանը), հաճախ զուրկ դասակարգային խորը գիտակցությունից, բայց և այնպես նրանք վորոշ չափով արտահայտում են իրենց ժամանակի պայքարը։

Պռոշյանը վերոհիշյալ նշանավոր վեպերից զատ ունի նաև բազմաթիվ մանր պատմվածքներ և պատկերներ, թե առանձին գրքով լույս տեսած և թե պարբերականներում տպագրված։ Տպել է նաև մի շարք թղթակցություններ զանազան ստորագրություններով կամ անստորագիր։

Պռոշյանը կատարել է թարգմանություններ ռուս և յեվրոպական հեղինակներից, վորոնցից նշանավոր են Լ. Տոլստոյի «Մանկություն և պատանեկություն»-ը, «Կովկասի գերին», Չարլզ Դիկկենսի «Դավիթ Կոպերֆիլդը» և այլն։

*
* *

1899 թ. մայիսի 16-ին Թբիլիսիում Մարկոս Դոլուխանյանի նախաձեռնությամբ տոնվում է Պռոշյա-

նի գրական գործունեության 40-ամյա և մանկավարժական գործունեության 44-ամյա հոբելյանները։ Նույն թվին Պռոշյանն աղատվում է պաշտոնից և դառնում Ներսիսյան դպրոցի թոշակառու։ Վոչ հոբելյանից ստացած գումարը և վոչ կենսաթոշակը, վոր տրվում էր չատ անկանոն, չեն ապահովում հեղինակին նյութապես։ 1904 թվին Սմբատ Շահազիզին ուղղած նամակում Պռոշյանը գրում է. «Ապրես, Սմբատ ջան, լավ ժամանակին հասցրիր, բնակարանի յերեք ամսվա վարձի համար մնացել եյի տարակուսած։ Առածը գիտես՝ մուկը ծակը չեր մտնում, ցախավելն ել պոչիցը կապեցին, գոհ չեյինք Ներսիսյան դպրոցի ստացածս ամսական 50 ռուբլի կենսաթոշակով, այն ել ոդոստոսից սկսած ընդհատվեցավ և մնացինք «անարյուն ճպռանց նման զոդս ծծելով» կարծեմ, ըստ Յեղիշեյի» [1]։

Դառն ու վողբերգական եյին Պռոշյանի կյանքի վերջին տարիները։ Կնոջ մահը, վոր տեղի ունեցավ 1905 թվին, և ավագ վորդու՝ Պռոշի Սիրիր աքսորվելը՝ հեղափոխական գործունեության համար, ծայրահեղ հուսահատության հասցրին նրան։ Միանգամից նա կորցրեց նախկին կենսուրախությունն ու աշխույժը։ Անհամբեր մահվան էր սպասում, տառապում էր մենակությունից։ Թափառում էր վայրից վայր, 1907 թվի հոկտեմբերին Պռոշյանը Թբիլիսիից

---

1 1892 թ. Մոսկվայում տոնվեց բանաստեղծ Ս. Շահազիզի 30-ամյա հոբելյանը։ Հոբելյանից գոյացած գումարներից ստեղծվեց «Աբովյան-Նազարյան» գրական ֆոնդը, վորի նպատակն էր ոգնել կարիքավոր հայ հեղինակներին։ Պռոշյանը ևս նպաստ էր ստանում վերոհիշյալ ֆոնդից։

Աշտարակ է մեկնում, վերջին անգամ իր սիրած և անմահացրած ծննդավայրը տեսնելու, Բասախ գետի ջուրը խմելու և ապա հանգիստ սրտով իր հայրենի հողում գերեզման իջնելու։ «Գնում եմ մեռնելու, իմ շիրիմս պետք է լինի Աշտարակում, իմ մայրաքաղաքում»—ասում էր նա մտերիմներին։ Բայց այստեղ ևս Պռոշյանը հանգիստ չի գտնում։ Ցեցերի Աշտարակը սառն է դիմավորում նրան։

Պռոշյանը հայրենակիցներին առաջարկում է հասարակության հաշվով շինել իր համար մի սենյակ, վորը նրա մահից հետո կլիներ հասարակական գրադարանի սեփականությունը, սրա փոխարեն նա խոստանում է Աշտարակի հասարակական գրադարանին նվիրել իր հարուստ գրադարանը և իր հեղինակությունների ժառանգական իրավունքը, վորը պիտի բերեր տարեկան յերեք հարյուր ռուբլի յեկամուտ։ Պռոշյանի խնդիրքը անուշադրության է մատնվում և նա մի քանի որ անց կոտրված սրտով թողնում է Աշտարակը։ Կրկին վերադառնում է Թբիլիսի, այստեղից հիվանդ վիճակում մեկնում է Բաքու և ապաստան է գտնում իր փեսա Ստեփան Տիգրանյանի տանը։ Հիվանդությունը որ ավուր ծանրանում է։ Ավելի յե ծանրացնում Պռոշյանի վիճակը նրա միայնակ և մոռացված լինելը։ «Եսպես էլ բան կլինի,—գանգատվում է անվերջ նա,—իմ բաղմաթիվ ծանոթներից վոչ վոք, վոչ վոք չի այցելում ինձ և չի մխիթարում ինձ. կարոտ եմ կենդանի խոսքի... կարծես Սահարայի անապատում եմ»։ Պռոշյանին տեղափոխում են հիվանդանոց, ուր և նա մեռնում է 1907 թվի նոյեմբերի 23-ին (հին տոմարով), առավոտյան ժամը 8 և 30 ր-

պեյին, 70 տարեկան հասակում։ Դիակը տեղափոխվում է Թբիլիսի և թաղվում Խոջիվանքի գերեզմանոցում՝ կնոջ կողքին։

Գուշյանն իր ընտանիքի հետ։

Տասնյակ տարիների հեռավորությունից մեր աչքերի առաջ այսպես է կանգնում նա. աչքաբաց, ժիր, ուշիմ, զարմանալի ընդունակ և ուսումնասեր մի պատանի, չքավորությունից ու մշտական կարիքից անբաժան, խճճված այն ժամանակվա սոսկալի իրականության սարդոստայնի մեջ, որից հուսահատական ճիգերով մի կերպ դուրս է պրծնում ու վոտք դնում

կյանքի տատասկոտ ուղին... ապա խիզախ ու գործունյա յերիտասարդ՝ նոր մտքերի ու ձեռնարկումների համարձակ հղացող ու գործադրող, վոր անդուլ մաքառում է տգիտության ու նախապաշարմունքի դեմ, հաճախ պայքարից դուրս և ընկնում խոցոտված ու արյունոտված, բայց միշտ հաղթական... վերջապես՝ ֆիզիկապես քայքայված, բայց աշխույժ ու կենսուրախ մի ծերունի իր բազմանդամ ընտանիքի նյութական հոգսը ուսին—սիրող հայր ու ամուսին, վաստակած, բայց չգնահատված հեղինակ ու հասարակական գործիչ։ Վերջում՝ միայնության դառն ու հուսահատական որեր ու տանջալից մահ։ Այսպիսին է բեղմնավոր վիպասանի անցած՝ աղքատության, զրկանքների, հալածանքների ու դառնությունների 70-սմյա ուղին։

Պռոշյանի ստեղծագործության հաստատուն կաղնին աճել և զարգացել է ժողովրդական կյանքի արգավանդ հողի վրա, նրա հյութերով է սնվել և փարթամացել։ Պռոշյանը բառիս իսկական իմաստով ժողովրդական գրող է, ժողովրդական կյանքի հարազատ արտահայտիչ, իր ստեղծագործությամբ կապված ժողովրդական—աշխատավորական լայն մասսային, նրա մտքի և հոգու աղխարհին։ Ժողովրդական կյանքի հարազատությունը—դեմոկրատիզմը, վորպես վորակ հայ նորագույն գրականության—վիպագրության մեջ առաջին անգամ հանդես բերեց Պռոշյանը, իր ստեղծագործության մեջ առնելով և զարգացնելով Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի դեմոկրատական տարրերը, հակադրվելով նրա նացիոնալիզմին։ Աբովյանի վեպը խարսխված չեր ժողովրդական կյանքի վրա, իր հիմ-

նական տրամադրությամբ հեռու յեր նրա կյանքից ու վոգուց։ Սակայն Աբովյանի վեպը միաժամանակ ուներ ժողովրդին հարազատ, ժողովրդից յեկող տարր։ Դա նախ և առաջ ժողովրդական կենդանի լեզուն եր, Քանաքեռի բարբառը և ապա Քանաքեռի կենցաղի—սովորությունների մի քանի կողմի իրական նկարագրությունը։ Աբովյանի վեպի այս տարրն է, վոր անցել է Պռոշյանին, նրա ստեղծագործության մեջ զարգացել, վորակ և դարձել։

Անցյալում լիբերալ քննադատության կողմից կամ բոլորովին մոռացության է տրվել Պռոշյանը կամ լավագույն դեպքում համեմատության մեջ դրվելով Աբովյանի հետ՝ ստորադասվել է, համարվել անշնորք, անտաղանդ, վերջնիս ուժն ու խորությունը չունեցող։ Պռոշյանի ստեղծագործությունը չի ընդունվել և չի ճանաչվել վորպես նորորակ արժեք, վորպես նոր մուծում հայ նոր ազգային գրականության գանձարանը։

Շարունակելով լիբերալ քննադատության դիծը, մեր որերում Պռոշյանի ստեղծագործությունն արժեքազրկելու փորձ են կատարել նացիոնալիստ—հակահեղափոխականները։ Ժողովրդի և նրա ստեղծած կուլտուրայի թշնամիների միտումն այստեղ արտահայտվել և իր ամբողջ մերկությամբ։ Նվաստացնել, վարկաբեկել անցյալի դեմոկրատական կուլտուրայի խոշորագույն արժեքները—ահա թե վորն եր այդ միտումը։ Գյուղագիրների (Պռոշյան, Աղայան) մասին արտահայտած Բաֆֆու արհամարհական կարծիքը, պարզ է, վոր բաժանում եյին նացիոնալիստները, վորքանել նրանք կամենային քողարկել այդ։ Պռոշյանի նկատմամբ նշանք ճգնել են ցույց տալ, վոր դեմոկ-

լատ վիպասանը կղերա-ֆեոդալական հոսանքի արտահայտիչն է։

Պռոշյանի յերկերն անշուշտ հեռու յեն գեղարվեստական կատարելություններ լինելուց, նրանք հաճախ մեղանչում են արվեստի պահանջների դեմ, յերբեմն փաստերը, ինչպես ավելորդ բան, ճնշում, ծանրացնում են վեպը, չեն մեկնաբանվում, չեն լուծվում յերկի սյուժեյի ընդհանուր կառուցվածքի մեջ ու մնում են վորպես սոսկ լուսանկարչական փաստեր, նրա դաղափարախոսությունը նույնիսկ զերծ չի պահպանողական և նացիոնալիստական վորոշ տարրերից, այսուհանդերձ Պռոշյանն իր ստեղծագործությունների ամենաարժեքավոր մասով հանդիսանում է գյուղական դեմոկրատիայի լավագույն իդեաների ամենահարազատ արտահայտիչներից մեկը։ Դրանով ել նա մոտ ու հարազատ է մեզ։

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը և նրա հետ մեկտեղ նոր Աշտարակը, մեծ շուքով տոնում են տառապանքով վաստակած, բայց անցյալում չգնահատված հուչակավոր վիպասանի ծննդյան 100-ամյակը և մահվան 30-ամյակը։ Յերախտավոր հեղինակը վերջապես գտավ իր իսկական գնահատողներին այնպիսի հասարակակարգում, ուր լուծված է անիծյալ «հացի խնդիրը» և վերացված է մարդու շահագործումը մարդու կողմից։

ՀԱՅՍՍՌ ԳԱ ԿԵՆՏՐՈՆԱԳՐԱՏՈՒՆ
ՀԱՅՈՒԿ ՖՈՆԴ ՀՊ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԵՐՃ ՊՈՌՇՑԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՑԵՐԿԵՐՆ ԱՌԱՆՁԻՆ ԳՐՔԵՐՈՎ—

1. «Սոս և Վարդիթեր» Լույս և տեսել՝ 1860 թ. Թիֆլիս, 1887 թ. Ցերևան, 1903 թ. Բաքու։
2. «Աղասի» (վոդեվերդություն). 1863 թ. Թիֆլիս։
3. «Կովածաղիկ» 1878 թ. և 1879 թ. Թիֆլիս։
4. «Հայի խնդիրը». 1880 թ. Թիֆլիս, 1904 թ. Բաքու։
5. «Շահեն». 1883 թ. Թիֆլիս, 1905 թ. Բաքու։
6. «Ցեղեր». 1889 թ. Թիֆլիս։
7. «Բղդե». 1890 թ. Թիֆլիս.
8. «Սկիզբն յերկանց». 1892 թ. Թիֆլիս։
9. «Հուշիկներ» (ա. շրջան). 1894 թ. Թիֆլիս։
10. «Ակցիզչի» (պատկեր) 1896 թ. Թիֆլիս։
11. «Նա» (պատկեր). 1896 թ. Թիֆլիս։
12. «Միքաել աղենց Աբգուլը» (զրույց). 1896 թ. Թիֆլիս։
13. «Մեր Խեչոն» (զրույց)։ 1899 թ. Թիֆլիս։
13. «Ցեղդի Մկրտչենց տունը» (պատկեր). 1899 թ. Թիֆլիս։
15. «Հունոն»։ 1901 թ. Թիֆլիս։

Թարգմանություններ

1. ՏՈԼՍՏՈՅ, Լ. Կովկասի գերին. 1891 թ. Թիֆլիս։
2. ՄՈՆԳՈՄԵՐ Ցերկու յեղբայր. 1895 թ. Թիֆլիս։
3. ԴԻԿԿԵՆՍ. Դավիթ Կոպպերֆիլդ. 1897 թ. Թիֆլիս։
4. ՍԼԻՎԻՑԿԻ. Խորամանկ աղվեսը. 1898 թ. Թիֆլիս։
5. ՏՈԼՍՏՈՅ, Լ. Մանկություն և պատանեկություն. 1899 թ. Թիֆլիս։
6. ԴԻՄԻՏՐԻՑԵՎԱ, Վ. Մանչուկն ու Կուտիկը. 1899 թ. Թիֆլիս։
7. Ջեսիկայի առաջին ատոթքը. 1899 թ. Թիֆլիս։
8. ՈԹԵՇԿՈ. Ե. Ցասի արկածները. 1900 թ. Թիֆլիս։
9. ԳՈԳՈԼ. Ամուսնություն. 1904 թ. Թիֆլիս։
10. ՎԵՐԵՍԱՅԵՎ, Վ. Մի անմեղ մարդու սոսկալի մահը. 1905 թ. Թիֆլիս։
11. ԻՎԱՆՈՎԻՉ. Ավոյենց Ստեփանը. 1910 թ. Թիֆլիս։

Գրավոր լիազոր 9241 պատվեր 1134
Հրատ. 4236 տիրաժ 4000

Պետհրատի տպարան, Երևան, Լենինի փ. № 65

[404]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0043047

I
A
6575